

Երեսնամյա այսպես

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ**

Ծաղկազարդի տոնը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Մարտի 20-ին Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին նշեց Ծաղկազարդը՝ Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ հաղթական մուտքի տոնը: Այն Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը տարիներ առաջ հռչակել է նաեւ իբրեւ Մանուկների օրհնության օր: Այս առիթով Առաքելության ժամերգությունից հետո, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, միաձնաէջ Մայր տաճարի շրջափակում տեղի ունեցավ Անդաստանի արարողություն եւ մանուկների օրհնության հատուկ կարգ:

Շարականի երգեցողությանն ու օրվա խորհրդին հարազատ ավետարանական

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Երկնավորից հայցեց, որ Ամենակալ Աստված զորացնի Հայաստան աշխարհն ու ժողովրդին՝ ապրելու բարօր ու երջանիկ կյանքով եւ իրականացնելու ազգի ու լատինյաց դավաժոր իղձերն ու երազանքները: Միասնական՝ Տերունական արդթից հետո Նորին Սրբությունը մանուկներին խաչեր ընծայեց: Այնուհետեւ Մայր տաճարում Պատարագ մատուցվեց: Հոգեւորականաց թափօրը՝ գլխավորությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցությամբ Էջմիածնի թիվ 1 հիմնական դպրոցի աշակերտների, առաջնորդվեց Մայր տաճար:



հատվածների ընթերցումից հետո օրհնվեցին աշխարհի չորս կողմերը, ապա Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց Էջմիածնից եւ Հայաստանի այլ բնակավայրերից Մայր Աթոռ ժամանած մանուկներին: Արարողության ավարտին Հայոց Հայրապետը, իր գնահատանքը բերելով Մայր Աթոռում մեկտեղված մանուկներին ու վերջիններիս ծնողներին, ներկայացրեց օրվա խորհուրդը, ապա մաղթեց, որ Աստված օրհնի բոլոր մանուկներին, Նրա սերունդը, շնորհը եւ ողորմությունը մշտապես լինեն ամենքի հետ, եւ հայ մանուկներն ապրեն Տիրոջ օրհնության ներքո՝ վայելելով իրենց ծնողների սերը, գուրգուրանքն ու խնամքը:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան Եպս Նավասարդյանը: Վարդան սրբազանը, իր քարոզում անդրադառնալով օրվա խորհրդին, ասաց. «Այս տոնը, սիրելիներ, մեզ համար առաջին հերթին լավագույն հնարավորությունն է ճանաչել տալու Հիսուսին՝ մեր Փրկչին, Ով եկավ փրկելու մեզ, ազատագրելու մահվան ճիրաններից: Նա եկավ մեզ հավիտենական կյանքի ժառանգորդներ դարձնելու, եկավ վերականգնելու արդարության, ճշմարտության եւ սրբության մեջ: Տիրոջ ճանաչողությունը Տիրոջ խոստովանությունն է: Շարունակությունը՝ էջ 2



Ավագ հինգշաբթին Մայր տաճարում



Մարտի 20-ին միաձնաէջ Մայր տաճարում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռի միաբանությունը մասնակցեց Երեկոյան ժամերգությանը, որի ընթացքում կատարվեց նաեւ **Հոնքաբեցը**: Ավագ խորանի վրա՝ փակ վարագույրի առջեւ, Մայր Աթոռի միաբաններ Մուշեղ Եպս Բաբայանը, Շահե ծ. վրդ. Անանյանը եւ Պարթեւ վրդ. Բարսեղյանը հաջորդաբար երգեցին «Բա՛ց մեզ, Տէ՛ր» շարականը, որից հետո բացվեց Ավագ խորանի վարագույրը:

Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր տաճարում կատարվեց **Ուտլվայի խորհրդավոր արարողությունը**: Արարողությունն սկսվեց միասնական՝ Տերունական արդթով: Այնուհետեւ Մայր Աթոռի միաբանները կարդացին օրվա խորհրդին վերաբերող սուրբգրային հատվածները: Ընթերցվեց նաեւ Հովհաննես Պլուզ վարդապետի շարադրած «Սիրո մասին» խրատը: Ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց խորանի վրա դրված ջուրն ու յուղը, որից հետո Նորին Սրբությունը, Աստվածորդու օրհնակով ծու-



Մարտի 22-ին միաձնաէջ Մայր տաճարում կատարվեց Երեկոյան ժամերգություն՝ հանդիսապետությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Հովհան Եպս Հակոբյանի: Սուրբգրային ընթերցումներից հետո Քրիստոսի երկրորդ գալստյան խորհրդով տեղի ունեցավ **Տասը կույսերի հիշատակի կարգը**: Մարտի 24-ին՝ Ավագ հինգշաբթի, Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին հիշատակեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Վերջին ընթրիքը եւ ս. Հաղորդության խորհրդի հաստատումը: Հանդիսապետությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Հովհան Եպս Հակոբյանի՝ Մայր տաճարում առաքելության կատարվեց **Ապաշխարողաց կարգը**: Այնուհետեւ Մայր Աթոռի միաբանությունը մասնակցեց Միջօրեի ժամերգությանը, որի ավարտին Աղան արք. Երնջակյանի կողմից մատուցվեց սուրբ Պատարագ: Պատարագի սրբազան արարողության ընթացքում ընթերցվեց ս. Բարսեղ Կեսարացու ճառը: Ավագ հինգշաբթի, հանդիսապետությամբ Ն.

կի գալով, հոգեպարար շարականների երգեցողության ներքո լվաց ու յուղով օծեց տասներկու անձանց ուղեքը: Վերջում օրհնված յուղը բաժանվեց հավատացյալներին: Երեկոյան կատարվեց **Խավարման արարողությունը**: Ուրբաթ՝ մարտի 25-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցան Ավագ ուրբաթի արարողությունները՝ ի հիշատակություն մեր Տեր Հիսուս Քրիստոսի չարաբանքների, խաչելության, մահվան ու թաղման: Կեսօրին կատարվեց **Խաչելության կարգը**: Երեկոյան, լախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Երեկոյան ժամերգությունը, ապա՝ Թաղման կարգը, որի ընթացքում մեր Տեր Հիսուս Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը՝ պատրաստված ծաղիկներից, միաբանների թափորով պատեցվեց ի տես բարեպաշտ ժողովրդի: Շարունակությունը՝ էջ 3

Ծաղկազարդի տոնը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Սկիզբը՝ էջ 1

Եկեք, ուրեմն, այս ուրախ տոնի առիթով, երբ ամենքս եկել ենք Իր Սուրբ Եկեղեցի՝ Տիրոջ ուրախանալու, բերել ենք նաեւ մեր մանուկներին, որ Տերն օրհնի, զորացնի, իմաստության մեջ սնի ու դաստիարակի, եկել ենք, որպեսզի Հայոց Հայրապետի աջի զորությամբ նրանք իրենց կյանքի կատարյալ իդեալ համարեն Հիսուս Զրիստոսին, Նրա խոսքի ճանաչողությամբ ու պատգամների կատարումով ընթանան Ավագ Հաբաթվա խաչի ճանապարհով, զնան Գողգոթայով, փնտրեն բոլոր այն դժվարությունների ճամփաները, որ Տերը պիտի տա մեզ, բայց մեծագույն հույսով՝ հասնելու մահվան հանդեպ մեր հաղթանակին»:

Պատարագիչը հորդորեց ոչ միայն շուրթերով փառաբանել ու օրհնաբանել Տիրոջ գալուստը, այլեւ կյանքի նորոգությամբ, Հայ Եկեղեցու խորաններից ճանաչող օրհնությամբ դիմագրավել կյանքի նեղություններն ու անհասկացողությունները, հավատքի տկարությունները վերականգնել եւ սեփական կյանքը փառավորել Տիրոջ հարությամբ:

Ս. Պատարագի ավարտին, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, վերստին կատարվեց մանուկների օրհնության արարողություն, որին ներկա էին նաեւ Մայր Աթոռի սոցիալական ծառայության գրասենյակի կողմից իրականացվող «Ծաղկազարդ Մայր Աթոռում» ծրագրի մասնակիցները: Ծրագրի շրջանակներում Մայր Աթոռ էր ժամանել Հայաստանի տարբեր թեմերից սոցիալապես անապահով ընտանիքների 300 մանուկ, որոնցից 100-ը՝ սիրիահայեր:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնության կարգի ավարտին շնորհավորեց մանուկներին, ապա ներկայացրեց տոնի խորհուրդը՝ նշելով, որ այսօր Փրկիչը մուտք է գործում հոգու տաճարներ, նաեւ եկեղեցիներ, ուր ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից համախմբված են ազգի հավատավոր զավակները: Նորին Սրբությունն անդրադարձավ սիրիահայ մանուկների մասնակցությանը, ովքեր թողնելով իրենց հայրենի օջախները՝ պատերազմական փորձությունների հարկադրանքի պատճառով հեռացել են Սիրիայից եւ ապաստանել հայրենիքում: Այս կապակցությամբ Հայոց Հայրապետը երկնավորից հայցեց, որ Իր խաղաղությունը հեղի աշխարհի տարբեր կողմերում պատերազմի տառապանքները կրող ժողովուրդների կյանքում:

Ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Տերը մուտք գործի ամենքի սրտեր եւ սրբագործի բոլոր չար մտածումներն ու խորհուրդները, որպեսզի նրանք մաքուր սրտով կարողանան կառուցել իրենց կյանքը, զորացնեն երկիրը, բարոր ու շեն դարձնեն ազգային կյանքը:

Խոսելով մանուկներին նմանվելու տերունապատվեր կոչի մասին՝ Վեհափառ Հայրապետը հավելեց. «Սիրեք մեր մանուկներին, ինչպես Տերը սիրեց, եւ մշտական մեր գուրգուրանքի առարկա դարձնեք նրանց: Ոչ միայն ծնողները, այլեւ յուրաքանչյուր հայորդի իր կարողությունների ու հնարավորությունների սահմանում թող նպաստի, որպեսզի մեր մանուկները երջանիկ ապրեն, հասակ առնեն սիրո մեջ, դառնան մեր ազգի եւ Եկեղեցու արժանավոր զավակները»:

Նույն օրը «Ծաղկազարդ Մայր Աթոռում» ծրագրի մասնակից մանուկներն Էջմիածնի «Հրաչե Եւ Սյուզան Թուֆայան» հայորդյաց տանը ներկա եղան տոնական համերգի, որի ավարտին նվերներ ստացան՝ պատրաստված Մայր Աթոռի սոցիալական ծառայության գրասենյակի եւ «SOAR» բարեգործական կազմակերպության միջոցներով:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ԲԵՐԻՍՏՈՍԻ ՍԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ



Յանուն Զօր եւ Որդու եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն:

«Յարեար ի մեռելոց Զրիստոս, Այսօր զգժոխս աւերեալ, եւ կենդանութիւն պարգեւեցր Արարածոց Զոյով յարութեամբը»: (Շարական)

Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր՝ ի Հայաստան, Արցախ եւ ի Սփյուռք,

Այսօր՝ Սբ Հարության քերկրալի տոնին, շարականագրի խոսքերով փառաբանում ենք մեր Տիրոջն ու Փրկչին, որ հարություն առավ մեռյալներից, ավերեց դժոխքը եւ Իր Հարությամբ արարածներին կենդանություն պարգեւեց:

Քրիստոսի Հարությունը մահվան խավարի մեջ ծագեցրեց լույսը հավիտենության, մարդկանց պարգեւեց երկնքի արքայության երանությունը, շնորհը՝ հարուցյալ կյանքի այս աշխարհում եւ հանդերձալում: Քրիստոսի Հարությամբ նոր արարչություն է, նոր մարդկություն, որը մեղքի եւ մահվան նզովքից ազատ՝ շնորհի մեջ է Աստծով ապրելու եւ հավիտենական կյանքին արժանանալու: Առաքյալի խոսքի համաձայն՝ «հինն անցավ, եւ հիմա ամեն



ինչ նոր եղավ» (Բ Կոր. Ե 17), քանզի Աստծո Միածին Որդին, Փրկիչ մեր Տերը «կործանեց մահը եւ լուսավոր դարձրեց կյանքն ու անմահությունը Ավետարանի միջոցով» (Բ Տիմ. Ա 10): Քրիստոսի Ավետարանը հարության Ավետարանն է, հավիտենության Ավետարանն է, կյանքի Ավետարանն է, որի միջոցով է մեզ հասու Աստծո անսահման սիրո իմացությունը, հոգիները կենդանացնող տերունական ձայնը, Քրիստոսի Հարության ճշմարտությունը:

Այսօր Տիրոջ հրաշափառ Հարության խորհրդի առջեւ բնականից բարձրանում է հարցը՝ որքանով ենք ապրում Քրիստոսով նորոգված կյանքով, ընթանում Փրկչի խոսքի եւ պատվիրանների համաձայն: Ի՞նչն ենք կարելու մեր կյանքում՝ հարության Ավետարանը, թե՛ մոլար վարդապետություններ եւ խաբեպատիր գաղափարախոսությունները, Տիրոջ կամքին հետեւե՞լ, թե՛ մեղսակորույս, կենսակործան ճանապարհները, երկնքում գանձեր դիզե՞լ, թե՛ շահատենչությունը, հոգեւոր ազատությունը, թե՛ սանձարձակությունը, ազն

վությունն ու ուղղամտությունը, թե՛ պիղատույան թվացյալ արդարությունը, եւ վերջապես՝ նախընտրում ենք Հիսուսին, թե՛ ավագակ Բարաբբային:

Գիտության, կրթության անօրինակ առաջընթացի հետ մեր ժամանակներում ականատեսն ենք նաեւ ավանդական արժեհամակարգի փլուզման, մարդու բարոյական անկման եւ հոգեւոր սնանկացման երեւոյթների: Կյանքի հարմարավետության, արագահասության հնարավորությունների պայմաններում մարդիկ, անգամ ընտանիքի անդամներ, օտարանում են միմյանցից: Բարիքների առատության մեջ ոչ թե կարիքն ու թշվառությունն են վերանում, այլ խորանում է հասարակության բեւեռացումը: Տեխնոլոգիաների առաջընթացը կյանքի դյուրություններ ստեղծելու հետ հանգեցնում է նաեւ նոր հնարանքներով ընթացող պատերազմների եւ ահաբեկչությունների, որոնք շարունակաբար ցնցում են աշխարհը՝ դառնալով համընդհանուր սպառնալիք մարդկության համար:

Նման իրողությունների առջեւ եւ մշտապես, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, հարկ է անդրադառնալ եւ բարձրաձայնել աստվածային արդարության ու հատուցման մասին այս աշխարհում եւ հանդերձալում, որը վերահաս է բոլոր անհատներին ու ժողովուրդներին: Արդարեւ, քրիստոսապարգեւ հարությունը միայն շնորհ չէ, այլեւ՝ դատաստան, ինչպես ասում է Ավետարանը. «Կգա ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կլսեն Նրա ձայնը եւ դուրս կգան. ովքեր բարի գործեր են արել՝ կյանքի հարության համար, իսկ ովքեր չար գործեր են արել՝ դատաստանի հարության համար» (Հովհ. Ե 28-29): Հարության, կյանքի ճանապարհը հրաժարումն է այն ամենից, ինչը դարձնում է գերի մեղքին, քանզի «մեղքի վարձը մահն է, իսկ Աստծո շնորհը՝ հավիտենական կյանք» (Հռոմ. 2 23): Այս իմաստով է առաքյալը կարեւորում երկնայինը հագնելը, «որպեսզի ինչ-որ մահկանացու է, կլանվի կյանքից» (Բ Կոր. Ե 4): Մահը կլանող կյանքը դա կյանքն է

հոգեւոր լիության, ձգտումն ու ջանքը՝ մտքով, սրտով, հոգու ողջ գործությամբ Աստծով ապրելու, ապրելու Ավետարանի պատգամներով, որոնք հարուցյալ կյանքի ուժն են ներարկում Քրիստոսին ապավինած անձանց ու ժողովուրդներին:

Տազնապներով ու ցնցումներով լի աշխարհը, նաեւ մեր իրականությունը, որ նույնպես բազմաձև է դժվարություններով ու խնդիրներով, կարող են վերափոխվել քրիստոսաշնորհ հոգեւոր լիության կյանքով՝ հաղթահարելով մարդկային ցավերն ու ողբերգությունները եւ ամենուր հաստատելով հիմքերը ապահովության ու բարօրության: Քրիստոսի Հարությունը մշտահունչ հրավեր է, որ աշխարհը վեր հանի մեղքից դեպի շնորհ, եւ ամենայն մահասփյուռ, ավերիչ իրողություն կլանվի Աստծով ապրող եւ առաջնորդվող կյանքից: Քրիստոսի Հարությունը հիմքն ու հաստատությունն է հավատքի, որ լուսավորում է մարդկանց սրտերը, նեղությունների հորձանուտում շնորհում հույս ու մխիթարություն, տառապանքների գողգոթաներում՝ հառնելու ուժ եւ զորություն, պարգեւում խրոխտ ու արիասիրտ ոգի՝ արդար մարտնչումներում, նվիրումի ոգեշնչում, բերկրանք ու խնդություն՝ ապրելու եւ արարելու: Այս ոգին ու ընթացքը հարազատ են եւ բնորոշ մեր ժողովրդին, մեր կյանքին ու պատմությանը եւ լուսավորումն մեր ներկան ու ապագան: Վեր հառնելու, դժվարությունների առջեւ չընկրկելու, նոր կյանք կերտելու վկայությունը մեր ժողովուրդը բերեց վերահաստատելով մեր անկախ պետականությունը, որի 25-ամյա տարեդարձն է այս տարի: Մեր հայրենիքի գորացմանը, համազգային մեր կյանքի շինությանն ու պայծառությանն ուղղված մեր ջանքերում եւ այսօր ծառացած մարտահրավերների առջեւ, սիրելիներ, Քրիստոսի Հարության հավատքն ու լույսն ունենք մեզ առաջնորդող, արդ, մեր կյանքը լցնենք մեր Տիրոջ սիրով, միմյանց զորակցությամբ, ավետիսներով բարի գործերի:

Շարունակությունը՝ էջ 3

Սկզբը՝ էջ 1

Շաբաթ երեկոյան, մեր Տեր եւ Փրկիչ Յիսուս Զրիստոսի հրաշափառ Ս. Յարութեան տոնի առիթով, հանդիսապետութեամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսի, միաձնաեջ Մայր տաճարում կատարվեց ճաշու երրորդ ժամերգութիւնը, կարդացվեցին սուրբգրային տարբեր հատվածներ, ապա Մայր Աթոռի չորս միաբան

Ավագ հինգշաբթին Մայր տաճարում

խորհրդին եւ կարեւորութեանը, իր քառուգում մասնավորաբար ասաց. «Գարնանային այս խաղաղ երեկոյան վերստին ուրախ ենք, վերստին ցնծուն եւ զվարթ է ամենքիս հոգին, քանզի մեկ անգամ եւս վստահ եղանք, որ Աստված, Ով իր կյանքը տվեց մեզ համար, անսահմանորեն սիրում եւ մեզ

Այսօր անժխտելի է, որ եթե Զրիստոս հարություն առած չլիներ, քրիստոնեությունը երբեւէ ծնված չէր լիկ: Եթե Յիսուս հարություն առած չլիներ, այսօր թերեւս պիտի հիշվեին կամ մեջբերվեին միայն Նրա որոշ խոսքերը: Եվ եթե Զրիստոս հարություն առած չլիներ, Նա կլիներ անարդարորեն մահվան դատապարտված եւ սպանված միլիոնավորներից մեկը: Մեր հավատամքը մասնավորապես շեշտում է, որ այդ մահը եղել է «մեզ համար», «վասն մերոյ փրկութեան»: Ամեն անգամ այս խոսքերն արտաբերելիս կարող ենք «զմտաւ ածել»՝ իսկ ինչպիսի՞ն էր փրկագործական այս ավարտի մասին Զրիստոսի ընկալումը... Իր տառապանքի ու խաչի վրա մահվան գնով Զրիստոսի կողմից կատարված Փրկագործությունը մարդկության պատմության մեջ Նշանակալից մի իրադարձություն է, ոչ միայն Նրա համար, որ իր լոռմին տարավ արդարության ու ողորմածության աստվածային ծրագիրը, այլեւ մարդու գիտակցության մեջ արթնացրեց տառապանքի մի Նոր նշանակություն: Տառապանքի փրկարար ուժը սիրո մեջ է: Տառապանքն արդեն պատիժ չէ, այլ Զրիստոսի Փրկագործության միջոցով փոխակերպվում է չարից ազատվելու եւ բարության հաղթանակի ուժի: Տառապանքով մահն արդեն Նոր կյանքի, Նոր Ուխտի սկիզբ է: Յիսուսի կողմից խաչի վրա հեղված Նոր Ուխտի արյունը Աստծո արդարադատության Նժարը դեպի մեղավոր մարդը չի ծանրացնում, այլ, ընդհակառակը, ցույց է տալիս, թե մինչեւ ուր է հասել Նրա սերը դեպի մարդը»:

Ս. Պատարագի ավարտին Նորին Սրբությունը, բարձրանալով Ավագ խորան, վառեց Յիսուս Զրիստոսին խորհրդանշող կենսատու մոմը, որը զետեղվեց Մայր տաճարում, որպեսզի հավատացյալները հնարավորություն ունենան իրենց օջախները տանելու հարուցյալ Աստվածորդուն մատնանշող կենդանարար լույսը:

Պատարագից հետո հոգեւորականների թափորը Մայր տաճարից առաջնորդվեց դեպի Յին Վեհարան, ուր, Նախագահությամբ Գարեգին Բ Ամենայն Յայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Ս. Յարութեան տնօրինեցի արարողությունը:

Սուրբ Յարութեան տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Մարտի 27-ին մեծ հանդիսավորությամբ նշվեց մեր Տեր եւ Փրկիչ Յիսուս Զրիստոսի Յրաշափառ Յարութեան բուն տոնը:

Բերկրառատ օրվա կապակցությամբ սուրբ Պատարագ մատուցեց Ն. Ս. Օ. Տ. Գարեգին Բ Ամենայն Յայոց Կաթողիկոսը՝ աշխարհասփյուռ հայությանը փոխանցելով «Զրիստոս յարեաւ ի մեռելոց» իրեշտակաբարբառ ավետիսը:

Պատարագի սրբազան արարողությունն սկսվեց հայրապետական խաչվառազարդ շքեղ թափորով: Ամպիովանու ներքո քայլում էին Ամենայն Յայոց Կաթողիկոսը, Յայաստա-

սի Յանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը եւ տիկին Ռիտա Սարգսյանը: Ամպիովանին կրում էին Յայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործադիր տնօրեն Արման Խաչատուրյանը, ՅՅ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Ստեփան Ռոստոմյանը,

Հովիկ Աբրահամյանը, ՅՅ կառավարության անդամներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, Յայկական բարեգործական ընդհանուր միության անդամներ, Յայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների եւ միջազգային կազմակերպությունների ղեկավարներ ու ներկայացուցիչներ, կրթության եւ մշակույթի գործիչներ, բազում ուխտավորներ:



սարկավագ ընթերցեց Դանիելի մարգարեությունը: Այնուհետեւ մատուցվեց ճրագալույցի ս. Պատարագը: Պատարագից եր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի բարերարներ, Մայր տաճարի ջրօրինեցի խաչի կնքահայրը՝ հրամանատար, գնդապետ Ջալալ Յարությունյանը (ԼՂՀ ՊԲ), զինվորականներ եւ բազում ուխտավոր հայորդիներ:

Պատարագի ընթացքում Մուշեղ սրբազանը, անդրադառնալով օրվա

իր բարեկամներն է համարում, քանզի՝ «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովի. 15:13):

Մայրամուտի շառագույնից գեղեցկացած այս օրը կրկին սփոփանք եւ ամիջում է բերում յուրաքանչյուրիս հոգուն, քանզի մեր հավատքի կիզակետ ճշմարտության ավետիսը, հապիտենականության ձգտող մարդու հույսը վերանորոգող երգակցությունն է թեւածում ամենուր, թե՛ «Զրիստոս յարեաւ ի մեռելոց, Զրիստոս յարեաւ ի մեռելոց»...



Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Կոստանյանը եւ Յայկ Բուզանդյանը (Սիրիա):

Միաձնաեջ Մայր տաճարի առջեւ Ամենայն Յայոց Յայրապետին եւ ՅՅ Նախագահին ողջունեցին Մայր Աթոռի «Եռնակեան» հանրակրթական դպրոցի աշակերտները, ՅԲԸՄ Երեւանի սկստական խմբի անդամները եւ Մայր Աթոռի ու ՅԲԸՄ-ի հովանու ներքո գործող հայորդյաց տների սաները: Յայրապետական Պատարագին մասնակցում էին նաեւ ՅՅ վարչապետ

Ս. Պատարագի ընթացքում Ամենայն Յայոց Կաթողիկոսին՝ որպես առընթերականեր, սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Հովհանն եպս Յակոբյանը եւ վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:

Արարողությանը ընթացքում Նորին Սրբությունը Ս. Յարութեան տոնի կապակցությամբ հայրապետական իր պատգամը հղեց համայն հայ ժողովրդին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ԲԵՐԻՍՏՈՍԻ ՍԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Սկզբը՝ էջ 2

Չատկական խորհրդով այսօր մեր հոգիներին շողում է քրիստոսապարգեւ հարության երկնային շնորհը, որը դրոշմվում է մեր կյանքին, երբ ապրում ենք հավատքով ու քրիստոնեական արժեքներով, մեր մերձավորների, մեր ժողովրդի, հայրենիքի ու մեր Սբ Եկեղեցու համար: Միաձնաեջ այս Սբ տաճարում արդյունք եւ մարդուն ենք, որ մեր ժողովրդի ամեն զավակ Զրիստոսի Յարութեան ավետիսն ընդունի Նորոգված հավատքով, եւ մենք՝ իբրեւ ազգ, առ Զրիստոս մեր Տերը սիրով, մեր արդար ու արժանավոր գործերով միշտ ընթանանք առաջընթացի ուղիով՝ մեր շուրթերին ունենալով մշտափունջ փառաբանությունը:

«Յարեար ի մեռելոց Զրիստոս, Այսօր զոժոխս աներեալ, եւ կենդանութիւն պարգեւեցեր Արարածոց Զոյով յարութեամբը»:

Զրիստոսի Սբ Յարութեան տոնի ուրախությունը մեր սրտում՝ ողջույն ենք հղում Առաքելական մեր Սբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Յայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Յայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մուրաֆյանին եւ մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին:

Ի Զրիստոս սիրով ողջունում ենք ջույր Եկեղեցիների հոգեւոր Պետերին՝ հարուցյալ Զրիստոսի երկնահեղ բյուր շնորհները հայցելով տիրախնամ նրանց հոտին:

Սբ Յարութեան ավետիսով մեր ողջույնն ու բարեմաղթանքներն ենք բերում Յայաստանի Յանրապետության Նախագահ Տիար Սերժ Սարգսյանին, Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Նախագահ Տիար Բակո Սահակյանին, հայոց պետական ողջ ավագանուն, Յայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին: Մեր սերն ու օրինությունն ենք բերում համայն մեր ժողովրդին՝ ի հայրենիս եւ ի սփյուռս աշխարհի:

Չատկական այս հուսառատ եւ շնորհաբեր օրը մեր հայցն է, որ հարուցյալ Զրիստոսի շնորհները տարածյալ լինեն համայն աշխարհում եւ հայրենի մեր երկրում, ամենուր տիրի խաղաղություն, եւ մարդկությունը՝ վեր հառնած ողբերգությունների, վշտերի ու նեղությունների անձալներից, հույսով ու հավատով կերտի իր կյանքը՝ լի սիրով, եղբայրությամբ ու համերաշխությամբ:

Թող սերը մեր Տեր Յիսուս Զրիստոսի եւ ողորմությունն Աստծո լինեն մեզ հետ եւ ամենքի, այսօր եւ միշտ եւ հավիտյանս, ամեն: «Զրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Օրինեալ է Յարութիւնն Զրիստոսի»:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

23 մարտի

Նուագարիայի Պիեռ Պազմանի անվան Կաթոլիկ համալսարանի լուսավորչականությունը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Կալէ եւ Թամար Մատուկեան» մատենադարանում ընդունեց Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթողիկ համալսարանի ղեկավար պրոֆ. Սուրոմի Սաբուլչին, դասախոսներին եւ ուսանողներին՝ ուղեկցությամբ Երեւանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ղեկավար պրոֆ. Ռուբեն Միրզախանյանի:

Հանդիպումն սկսվեց միասնական՝ Տերու-
նական աղոթքով: Ապա տիար Ռ. Միլոզախ-
այանը, ուրախություն հայտնելով իշուրերի՝
Մայր Աթոռ կատարած այցի առիթով, ներկա-
յացրեց երկու կրթական հաստատություննե-
րի միջև ձեւավորվող գործակցությունը: Նա
մասնավորապես տեղեկացրեց, որ կնքվելու

Եւ արդի մարտահրավերները:

Հայոց հովվապետը գոհունակությամբ անդրադարձավ նաեւ Հայաստանյայց Առաքելական եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների երբայորակակ փոխհարաբերություններին, ինչպես նաեւ Ֆրանցիսկոս Պապի՝ Հայաստան կատարելիք առաջիկա այցին: Այս առիթով Նորին Սրբությունը վերհիշեց 2015 թ. ապրիլի 12-ին Կատիկանի Սբ Մետրոսի օժանդրում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Հռոմի Զահանայապետի մատուցած Պատարագը՝ ընդգծելով, որ հայ ժողովուրդը մշտապես երախտագիտությամբ է հիշելու վերջինիս ցուցաբերած գոհակցությունը:

Այս առիթով խոսք ասաց նաեւ պրոֆ. Սուրոմի Սաբուլչը: Մեծ հարգանքով արտա-



Ե համագործակցության պայմանագիր, ըստ որի՝ Հունգարիայում հիմնադրված 18-րդ դարի այդ կարեւորագույն կրթական հաստատությունում ստեղծվելու է հայագիտական ամբիոն, իսկ առաջիկա տարիներին իրականացվել են նաեւ դասախոսներին եւ ուսանողներին փոխանակման ծրագրեր:

Այսուհետև ներկաներին իր օրինությունն ու հայրապետական պատգամը փոխանցեց Ամենայն Հայոց Վաթարդիկոսը: Նորին Սրբու- թյունն ընդգծեց, որ հաճելի է համայն հայու- թյան հոգեւոր կենտրոնում հյուրընկալել Վա- թրիկ համալսարանի ճեկատորին, դասախոս- ներին և ուսանողներին:

Անդրադրառնալով պատմական աղբյուրներին՝ Վեհափառը փաստեց, որ այս գործակցային հարաբերությունները գալիս են Նորոգելու այն ջերմ կապերը, որոնք դեռես 10-րդ դարից ձևավորվել են երկու բարեկամ ժողովուրդների միջև: Նորին Սրբությունը խոսեց Հունգարիայի իայկական համայնքի ու իայ ժողովրդի՝ այնտեղ կերտած կրթական ու մշակութային հաստատությունների մասին, ներկայացրեց Հայ եկեղեցու առաքելությունը իայ ժողովրդի կյանքում, պատմության ընթացքում դիմագրաված փորձությունները

**Քուվեյթի արդարադատության, կրոնական կալվածքների և
իսլամական հարցերով նախարարին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Զուլվեյթի արդարադատության, կրոնական կալվածքների եւ իսլամական հաքերով նախարար Յակոբ Աբդ ալ-Մոհսեն ալ-Մանիէի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանի եւ Զուլվեյթում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆադէյ Հար-ոյլյանի:

Ողջունելով նախարարի այցը Հայաստան՝
Վեհափառ Հայրապետը գոհունակություն
հայտնեց երկու պետությունների միջև առ-
կա ջերմ հարաբերությունների եւ ընդլայն-

վող համագործակցության համար:

Նորին Սրբությունն անդորադարձավ արաբական աշխարհի երկրներում, հատկապես Ցեղասպանությունից հետո հաստատված հայորդիների նկատմամբ ցուցաբերվող ուշադրությանը՝ ի մասնավորի գնահատելով հայտնելով Զուլայի իշխանություններին՝ հայ համայնքի հանդեպ հոգածու վերաբերմունքի համար: Ամենայն Յայոց Յայրապետը հույս հայտնեց նաեւ, որ երկրի իշխանությունների բարյացակամ աջակցությամբ կկարգավորվի հայ համայնքի մշտական եկեղեցի ունենալու խնդիրը:

Հանդիպմանը զարեգին Բ Կաթողիկոսը մտահոգությամբ արձանագրեց, որ վերջին շրջանում որոշ կրոնական ծայրահեղական ուժեր փորձում են որոմ եւ թշնամաց սերմանել քրիստոնյաների եւ մահմեդականների միջեւ: Նորին Սրբությունը, հաստատելով, որ Աստծուն հավատացող անձը չի կարող իրեն ոտնձգություն թույլ տալ Աստծու արարածի հանդեպ, խստորեն դատապարտեց Բարձրալի դեմ ուղղված նման ոնդագործությունները:

Հայոց Հայրապետին ընդձեռեց, որ Արաբական աշխարհի երկրներում հայ համայնքների խաղաղ և համեմաշխ համակեցությունը բարի օրինակ է բազմազգ և բազմակրոն շատ երկրների համար: Այս կապակցությամբ նա տեղեկացրեց նաեւ, որ կրոնական պետերը տարբեր հանդիպումների և երկխոսության միջոցով շանքեր են գործադրում՝ խաղաղության, փոխհասկացողության և եղբայրսիրության բարի օրինակ ցույց տալու հոնեց հետեւողներին:

Իր խոսքում նախարար Յակոբ Աբդալ-

Մոհսեն ալ-Սաևիեն շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ջերմ ընդունելության համար՝ հավաստիացնելով, որ իր գործունեությամբ ջանալու է առավել նպաստել եւ զարգացնել երկու երկրների միջեւ առկա բարեկամությունն ու համագործակցությունը: Խոսելով կրթիների եւ ազգային փոքրամասնությունների նկատմամբ հանդուրժողականության մասին՝ նախարարը նշեց, որ Զուլեյթի իշխանությունները խորին հարգանք են տածում ինչպես իսլամի, այնպես էլ քրիստոնյաների հոգեւոր ներկայացուցիչներին հանդեպ: Վերջինս նույնպես դատապարտեց ծայրահեղականների կողմից դուռնորվող բռնությունները՝ հաստատելով, որ Զուլեյթի իշխանությունները են ջանքեր են գործադրում ի պահպանությունը տարածաշրջանում կայունության եւ հաղաթուրթի:

Հանդիպումը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Յովհաննիսյանը:

30 մարտի

**Արդյունաբերողների եւ գործարարների
միջազգային կոնգրեսի խորհրդի
նախագահության անդամներին**



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արդյունաբերողների եւ գործարարների միջազգային կոնգրեսի խորհրդի նախագահության աղակալմանին՝ ուղեցնությամբ Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանի:

Պատվիրակության անունից շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ պրն Արսեն Ղազարյանն ու Արդյունաբերողների և գործարարների միջազգային կոնգրեսի խորհրդի նախագահ, Մոլդովայի արդյունաբերողների և գործարարների ազգային կոնգրեսի նախագահ պրն Վասիլի Տառլեւը Վեհափառ Հայրապետին ներկայացրեցին մարտի 29-ին երեւանում գումարված կոնգրեսի խորհրդի նախագահության նիստի արդյունքները:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կա-

թողիկոսն իր գնահատանքը բերեց միջազգային կոնգրեսի անդամներին՝ կարելոթելով նրանց առաքելութիւնը սոցիալական խնդիրների լուծման եւ մարդկային կյանքի բարօրութեան ու առաջընթացի կերտման գործում:

Նորին Սրբությունը մաղթեց, որ երկնավոր Տիրոջ օրհնությամբ հաջողություններ մշտապես ուղեկցեն կոնգրեսի անդամներին, եւ նրանց ազնիվ ջանքերի ու համագործակցության արդյունքում մարդկությունը ձերբագատվի իր առջեւ ծառացած բազում դժարություններից:

Հանրային արժանքներ կա եկն Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրէն Նաթան արք. Հովհաննիսյանն ու Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրէն Մուշէղ եպս Բաբայանը:

**Ամենայն Հայոց Կաթողիկոսի
ցավակցագիրը Բելգիայի վարչապետին**

Մարտի 22-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գա-
րեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ
Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցա-
վակցական ուղերձ է հղել Բեզիդայի
Թագավորութեան վարչապետ Շառլ
Սիշէլիի՝ Բոյունսէի Միջազգային օ-
ղանավակայանում եւ մետրոյում
տեղի ունեցած պայթյունների կա-
պակցությամբ եւ Հայաստանյայց Ա-
ռաքելական Սբ Եկեղեցու անուհից
իր գորհակցութիւնը բերել գոհեցի

հարազատներին ու Բեղիայի ողջ ժողովրդին: *Ե՛ն՝ ՆԵՄԱՆՔԻՆ՝*
Խաղաղության:

Յավակցագրում մասնավորապես ասված է. «Խստորեն դատապարտում ենք Բյուրսեւում իրականացված ահաբեկչական գործողությունները, որոնք խլեցին տասնյակ անմեղ կյանք: Այսօրինակ հանցագործությունները, որ չեն կարող ունենալ որեւէ արդարացում, ուղղված են մարդկության դեմ և մարտահրավեր

ԵՆ՝ ՆԵՏՈՎԱԾ քաղաքակիրթ ողջ աշխարհին:

Դժգոհություն այս պահին, Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու անունից, Մեր գորակցությունն ենք հայտնում Ձեզ, Բելգիայի ողջ ժողովրդին ու զոհերի հարազատներին: Աղոթում ենք զոհերի հոգիների հանգստության համար եւ շուտափույթ ապաքինում մաղթում բոլոր փրկավորներին»:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են նորաօծ եկեղեցականների նշանակումներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառույցներում եւ Հայ եկեղեցու տաղերեւթներում:

Վազգեն արզ. Պետրոսյանն իր հոգեւոր սպասավորությունը կրեւի Մայր Աթոռի վանոթեից տեւելությունում, Մակար քին. Գալամարայանը եւ Չարեի քին. Աշուրյանը՝ Շիրակի թեմում, Գրիգորիս քին. Դերմանյանը՝ Գուգարաց թեմում, Մերոակ քին. Աղայանը՝ Տավուշի թեմում, Արիս քին. Խաչատրյանը՝ Բանակի հոգեւոր առաջնորդությունում, Նա Նաեւ, համատեղության կարգով, հովվական ծառայություն կիրականացնի Արմավիրի թեմում:

Ի Տեր հանգավ Տ. Դավիթ արք. Սահակյանը



թյունը խորապես ցավում եւ սգում են Դավիթ սրբազանի վախճանը:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

Ի Տեր հանգավ Տ. Եղիշե արք. Կիզիրյանը



Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբանությունը խորապես սգում են բազմավաստակ Եղիշե սրբազանի մահը:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդարանից Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկացվել է, որ մարտի 15-ին, կյանքի 81-րդ տարում, վախճանվել է Մայր Աթոռ Սբ Էջմիածնի երիցագույն միաբաններից Դավիթ արք. Սահակյանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբանությունը խորապես ցավում եւ սգում են Դավիթ սրբազանի վախճանը:

Սրբազան հոր վախճանը մեծ կորուստ է Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու համար:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք եւ

Մարդը, գիտնականը եւ մանկավարժը

Ուսուցչապետ, եզակի մտավորական Պետրոս Հովհաննիսյանը խոսքի եւ գրի լուսաշխարհից անսպասելի, առանց նախազգուշացման եւ առանց հրաժեշտի տեղեկոխվեց հավիտենական քնի եւ լռության աշխարհ:

Լուսաշխարհում նա տքնեց, արարեց, ուսուցանեց ընդամենը 71 տարի: Գնաց՝ թողնելով պատմագիտական, աղբյուրագիտական, մատենագիտական պատկառելի ժառանգություն, օրինակելի ընտանիք, համակիրների եւ ուսանողների անհաշիվ բանակ:

Չարմանալի հայ մարդ ու գիտնական էր Պետրոս Հովհաննիսյանը, օժտված էր բնիկ հայի առասպելական աշխատասիրությամբ ու նվիրվածությամբ. նա սարի պես կանգուն էր ու զորեղ, մանկան պես՝ փխրուն ու անմիջական:

Պետրոս Հովհաննիսյանը հասկանալի մարդ էր ու գիտնական: Հասկանալի էին նրա գրիչը, խոսքը, համոզմունքը, պահվածքը եւ շարժումները: Նրա կյանքում տեղ չգտան արծաթասիրությունն ու շահամոլությունը, ինչի համար էլ դարձել էր ուսանողության պաշտելին, գործընկերների եւ շրջապատի սիրելին:

Նա խստության եւ ներողամտության համադրություն էր, արտաքինից խիստ էր, բայց նրա բոլոր ուսանողները գիտեին, որ նա գյուրեցուն հատուկ նուրբ եւ սուր հուժկու ուներ, ինչն էլ օգնում էր նրան դասախոս-ուսանող հարաբերությունները ճիշտ եւ բարեկամական հողի վրա կառուցելուն: Նրան աշակերտած յուրաքանչյուր ոք կվկայի, որ նա խստապահանջ դասախոս էր, իր հանձնարարականների մեջ՝ բժախնդիր, հետեւողական: Բարձր էր նաեւ պատասխանատվությունն իր գործի նկատմամբ. այդպիսին էր եւ՛ ճեմարանում, եւ՛ համալսարանում: Նույնիսկ իր կյանքի վերջին օրը մտահոգ է եղել իր սաների դասերով:

Նա պահանջկոտ էր, բայց հանդուրժող, ո՛չ քննախնդիր, հետեւողական, բայց ներող, չսովորողին սովորեցնող,



խիստ էր որպես գիտնական, սակայն ներողամիտ՝ ուսուցչի եւ ծնողի նման:

Նա գիտելիքով ծանրաբեռ էր եւ կատարելապես տիրապետում էր հայերենին ու մարդկային հոգու եւ խղճի լեզվին, ինչը եւ նրա մեծ հեղինակության ու հաջողությունների բանալին էր:

Մեր մատենագիրների եւ գրիչների նման պաշտում էր գիրքը, փաղաքշում, գուրգուրում էր տպագիր խոսքը: Գիրքը ձեռքն առնում էր հացի պես եւ վստահ էր, հավատում էր, որ հայի մեր տեսակի հարատևության գաղտնիքը գիրքն է՝ հոգեւոր պահեստարանը: Մեղվի նման շանադիր՝ հավաքում, գտնում, կուտակում էր գիրքը գրքի կողքին, շարունակում էր գիտելիքների պես, գծագրում, շինում էր հայագիտական ընտիր հրատարակությունների գրադարան-բանակ: Նա ավետարանական «ոչ միայն հացիկ»-ին հավատարիմ՝ համոզված էր՝ ապագա բոլոր պատերազմներում հաղթանակ է տոնելու այն բանակը, որը գինված է հոգեւոր զենքով: Պետրոս Հովհաննիսյանի ստեղծած գրադարան-բանակը մեզանում ամենաարդիականն է ու ամենամարտունակը: Ասել է թե՛ մեր ապագա բոլոր ճակատամարտերին մասնակից է լինելու գրքերի աշխարհի տիրակալ Պետրոս Հովհաննիսյանը:

Նա, շուրջ 40 տարվա դասախոսական աշխատանքին զուգահեռ, անդադրում ստեղծում էր գրքեր, դասագրքեր, մատենագիտություններ, քրեստոմատիաներ, գրում էր գրքերի առաջաբաններ, վերջաբաններ, անթերի ծանոթագրում, մամուլում հանդես գալիս գրախոսություններով, դեկավարում թեկնածուական ատենախոսություններ եւ ավարտաճառներ, կազմում էր դասական հայ պատմաբանների աշխատությունների ժողովածուներ, որոնց պատկը, անկասկած, Նիկողայոս Ադոնցի վեցհատուրյակն է (ցավով, հրատարակված չտեսավ իր այնքան փայլալույս 7-րդ՝ նամակների հատորը):

Համալսարանից, Գեորգյան հոգեւոր ճեմարանից, գրքից եւ գրադարանից վեր նա ընտանիքի մարդ էր: Իր ազնավական կնոջ եւ զավակների հետ ստեղծել է ամրոցատիպ մի եզակի ընտանիք, որ չափազանց նման է փոքր, կառավարելի, բարեկեցիկ, հասկանալի, հայախոս ու հայաձեռն եկեղեցու եւ պետության:

Բարեխիղճ էր ու չափազանց կարգապահ. աներկբա է, որ համատեղությամբ հրատարակած յուրաքանչյուր գրքի ծննդի ժամանակ առավել շանք ու եռանդ նա էր թափում, ստուգում էր, ճշգրտում, ծանոթագրում. նրա համար էականը նոր գրքի ծնունդն էր. ծնողի պես հրճվում էր նորածնի գալստյամբ:

Մեծարգո պրոֆեսորը սիրված էր ամենից՝ թե՛ ուսանողներից եւ թե՛ գիտնականներից: Մեծ հեղինակություն վայելող մանկավարժներից ու պատմաբաններից մեկն էր, որի կտակի պես թողած ժառանգությունը եւ գիտելիքները, փորձն ու հմտությունները ապագայում էլ ի սպաս են դրվելու նոր սերնդի կրթության ազգօգուտ եւ շնորհակալ գործին:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի. ամեն»:

Սրբապատ քին. ՊՊՐՈՍՅԱՆ Ս. Էջմիածնի մատենադարանի տնօրէն Ալբերտ ԻՍՈՅԱՆ «Հայագիտակ» հրատարակչության տնօրէն

ԱՄՈԹԷ

Իր քարոզներից մեկում Հովհաննես Պուլգ Երզնկացին հետեւյալ կերպ է ստուգաբանում աղոթքի իմաստը. «Աղոթք բառը երկվանկան է. առաջին վանկը ունի աղաչական, աղերսական, սրտի խորքից բխած աղաղակի իմաստ: Իսկ «ոթ»-ը պատշաճ հարկցում է, որով հորջորջվում է աղոթք բառը»: Աղոթքի գաղափարը կարծր թելի նման բացվում է Ս. Գրքում, սակայն այն ավելի պարզ ու ամբողջական տեսք է ստանում Դուկասի Ավետարանի 18-րդ գլխում:

«Ամիրազ դատավորի մասին» առակում Հիսուսը, դիմելով Իր աշակերտներին, պատգամում է նրանց, որ նրանք պետք է ամեն ժամ աղոթեն ու չձանձրանան: Ամբողջացնելով առակի բովանդակությունը՝ վկայակոչելով ավետարանական համանուն հատվածը. «*Լսեցե՛ք, թե ինչ էր ասում անիրավ դատավորը: Իսկ Աստված արդարություն չի՝ առնի Իր այն ծառաներին, որոնք գիշեր ու ցերեկ աղաղակում են. եւ նրանց հանդեպ միայն համբերատա՞ր կլինի: Այո՛, ասում եմ ձեզ, նրանց խնդրյալ արդարություն կանի. իսկ երբ Մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավատք կգտնի՞»:*

Երեք տեսակի թշնամիներ կան, որոնք ջանում են արգելել լինել բարի գործերին եւ գրկել հավերժական կենդանությունից: Դրանք, ըստ Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցու, սատանան, մարմինն ու աշխարհն են:

Նա կարծում է, որ սատանան ներքին թշնամի է, որ բազմատեսակ խաբեական հնարներով դրոշմ է մարդկանց դարձրելու աղոթքը: Աղոթողի մտքի մեջ աղտեղի մտածումներ, սնափառություն, աշխարհային հոգսեր է գցում, միտքը ցրում ու պղտորում սին մտածումներով, տրտմությամբ կամ թերահավատությամբ:

Խոսելով մարմնի բացասական ազդեցության մասին՝ ընդգծում է. «Մարմինը ծակից թշնամի է, որ հոգուն անդադար ստիպում է կատարել իր քմահաճույքները եւ ոչ թե Աստծու կամքը, պահեցի խորշել տալիս՝ պատճառ բերելով իր տկարությունը, եւ հոգուն իրեն կամակից դարձնում՝ որովայնն ամեն օր փորձելի կերակուրներով խճողելու»:

Երջանկահիշատակ Պատրիարքն աշխարհը որակում է իբրեւ արտաքին թշնա-

մի, որն իր սին վայելչությամբ հրապուրում է միայն երկրավոր բաների մասին մտածելու. առաջարկում է հարստություն, փառք, փափկակեցություն, ջանում ողորմածների ձեռքերն աղբատներից ու կարոտյալներից պահել, որպեսզի այս կյանքը ճոխ ունեցվածքով վայելեն ու ոչնչի պակասություն չունենան:

Աղոթքը մի ճանապարհ է, որով անցնում է ամեն մի բարեպաշտ քրիստոնյա: Ինչպես հայտնի է, սկզբում անփորձները շատ դժվարություններ են կրում ու բազում սխալներ գործում, բայց երբ անձանձիր աշխատասիրությամբ հմտանում են արհեստին, սկսում են դյուրին եւ անսխալ ճանապարհով ընթանալ:

Աղոթքի պատրաստությունն այնքան էլ հեշտ չէ. այն հոգեմտավոր լուրջ պատրաստվածություն է պահանջում, քանի որ աղոթքի միջոցով Աստծուն տալիս ենք ամենաեականը:

Տեղին է ասված. «*Ով կարող է գործով կատարել աղոթք, երկրպագություն, պահք ու ողորմություն, թո՛ղ դրանք զանց չառնի՝ հույս ունենալով, թե միայն կամքի հոժարությունը բավական կլինի: Իսկ նա, ով գործով կատարել չի կարողանում, թո՛ղ չփախովի, թե վարձատրությունից զրկվեց, որովհետեւ Աստված երբեմն որպես վարձատրության արժանի գործ է ընդունում բարեմիտ կամքի պատրաստությունն ու հոժարությունը, երբ կամքը հաստատուն է»:*

Ըստ բնույթի՝ աղոթքները լինում են հավատի եւ փառաբանության, զղջման եւ ապաշխարության, դավանական, բարեխոսական եւ այլն:

Իրենց նշանակությամբ կոչվում են «խնդրվածքներ», «օրհնություններ» եւ «գոհություններ»:

4-րդ դ. եկեղեցական հայրերից Հակոբ Մծբնա Հայրապետը հակիրճ տվել է դրանց բնութագրերը, թե՛ «խնդրվածքները» այն աղոթքներն են, որոնցով գործված մեղքերի

համար գթություն եւ ողորմություն են խնդրում Աստծուց, իսկ «օրհնություններով» ու «գոհություններով» խնդրությամբ գոհանում ենք երկնային Հորից եւ օրհնում Նրան Իր բոլոր գործերի համար:

Գրիգոր Տաթևացին, խոսելով աղոթքի տալը խորհուրդների մասին, որպես այդպիսիք նշում է գոհությունն ու օրհնությունը: Աղոթքը մեծ տեղ է խորհրդապաշտական նշանակություն ունի ճգնակեցական կյանքում:

Համաձայն արեւելաքրիստոնեական եւ Հայ Եկեղեցու ավանդության՝ աղոթելու ժամանակ դեպի արեւելք են դառնում: Արեւելքը, իր հոգեւոր եւ կրոնական հասկացությամբ, խորհրդապաշտական բովանդակություն է ստացել, եւ ավանդաբար օրենքի ու կանոնի ուժ է ստացել նաեւ աղոթելիս մարդկանց հայացքը դեպի արեւելք դարձնելը:

Պետք է խմանալ, որ աղոթքը մարմինն է ու հոգի. մարմինն աղոթքի խոսքերն են, որոնք լսելի են լինում, իսկ հոգին՝ իղձն ու սերը, որոնք ելնում են սրտից եւ հաճելի դառնում Աստծուն:

Ինչպես, օրինակ, տեսանելի մարմինն ունի աներեւույթ հոգի, որը մարմինը շարժողն ու կենդանություն տվողն է, այդպես էլ աղոթքի մարմնի կենդանությունը սրտի բաղձնաքն է, իսկ սերը՝ դեպի Աստված շարժող՝ ի հաճություն Նրա: Եվ ինչպես երբ հոգին վերանում է, մարմնի տարրերից ոչինչ չի պակասում, այլ՝ մարմնի տեսքը մնում է նույնը եւ անթերի, այդպես էլ սրտի բաղձանքից ելնող աղոթքը կենդանի է եւ հաճելի Աստծուն:

Հետեւաբար եզրակացնում ենք, որ աղոթքն առավել պատվական ընծա է Աստծուն, քան այն ամենը, ինչ մատուցում ենք Նրան:

Երբ ընթերցում են Ս. Գիրքը, Աստված է խոսում քեզ հետ, իսկ երբ աղոթում են, դու ես խոսում Աստծո հետ՝ ըստ սաղմոսերգուի այն խոսքի. «Ես աղոթում եմ Աստծուն կյանքի համար»:

Աղոթքի գործը կարող է կատարվել ամեն ժամ՝ գիշեր թե ցերեկ, տանը նստելիս թե ճանապարհ գնալիս, առողջության, հիվանդության, մանկության, ծերության ժամանակ, ամռանը, ձմռանը. մշտապես:

Մարդիկ ավելի շատ են աղաղակում առ Աստված հորդեհի, ջրհեղեղի, գերեվարության ժամանակ: Այդպես էլ՝ եթե մեր հոգում վառվում է բարկության հուրը, հանգսենք այն ողորմության ջրով, եթե գեշ ցանկության հեղեղն է բարձրանում, աղաղակենք առ Քրիստոս, ինչպես առաքյալները ծովում. «Ահա կորչում ենք»:

Եվ թե սատանան ելնում է կողոպտելու մեզ, աղոթենք առ Աստված, ինչպես Եգեփիկան էր աղոթում Աստեբերիմի ձեռքից ազատվելու համար (Ես. ԼԷ 15-20): Աղոթքները կանխում են մահը, որ Աստծո հրամանն է, ինչպես կանխեցին Եգեփիայի մահը (Դ Թագ. Ի 1-7), գազաններին, ինչպես եղավ, երբ Դանիելը նետվել էր առյուծների գուլթը (Դան. 2 16, 22):

Ամեն ժամ աղոթել նշանակում է աղոթել, մինչ Տերը նստած է ողորմության աթոռին՝ ըստ առաքյալի. «Ահա հիմա է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկության օրը» (Բ Կորնթ. 2 2):

Ամեն ժամ աղոթել նշանակում է ամբողջ սրտով աղոթել առ Աստված արքայության, ոչ թե մարմնավոր բաների համար:

Եվ քանի որ մեր Տեր Աստված ողորմած ու գթառատ է, ուստի չպետք է երկարեցնել աղոթքները՝ մտածելով, թե Աստված մեզանից հեռու է կամ թե չգիտի մեր սրտերը, անգույթ է, գթա: Եթե սուրբ սրտով ու ջերմ սրտով երկար աղոթենք Աստծուն, մեծ վարձ կստանանք, ինչպես որ Ինքը՝ Քրիստոսը, մեզ գործով սովորեցրեց ամբողջ գիշերն Աստծուն աղոթել:

Հարկ է նշել, որ աղոթքը Քրիստոսն է սահմանել: Եվ թե աղոթքները, որ մարդիկ են սահմանել, պետք է սովորել ու աղոթել, ապա որքա՞ն առավել պետք է սովորել այն աղոթքը, որն Աստված ուսուցանեց: Այն անհրաժեշտ է ու բարեբեր, քանի որ այն ամենը, ինչ պետք է մեզ, աղոթքով է հայցվում:

Շարունակությունը՝ էջ 10

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ

Սկիզբը՝ 2015-ի թիվ 17, 2016-ի թիվ 5

Սկսած Դ դարից, երբ քրիստոնյաների նկատմամբ հալածանքներն ավարտվեցին, հրապարակային ապաշխարանքի կարգն իր տեղը աստիճանաբար զիջեց առանձնական խոստովանությանը (որոշ համայնքներում հրապարակային ձեռք կիրառվեց մինչև Է-Թ դարերը)։ Ավելի ուշ շրջանում խոստովանության առանձնական եւ հրապարակային ձեւերն սկսեցին փոխարինել կամ լրացնել մեկը մյուսին։ Հրապարակային ապաշխարությունը, չնայած իր դրական ազդեցությանը, որոշակի վտանգ էր ներկայացնում։ Ողջ համայնքի ներկայությամբ բացահայտ խոստովանումը կարող էր մեղքի սերմեր գցել մյուս հավատացյալների հոգում։ Լսելով գործված մեղքերի մասին՝ մյուսները հաճախ իրենց առավել կատարյալ էին համարում, ինչն էլ հանգեցնում էր գոռոզամտության ու հպարտության։ Բացի այդ՝ բազմաթիվ քրիստոնյաներ, երկյուղելով շրջապատի քննադատությունից, հանդիմանակնքից ու ատելությունից, հաճախ թաքցնում էին իրենց գործած ծանր մեղքերը։

Կ. Պոլսի պատրիարք Նեկտարիոսը շեշտում էր, որ հրապարակային ապաշխարությունը չպետք է պարտադրվի, այլ այն պետք է իրականացվի հավատացյալի կամքով ու խղճի թելադրանքով։ Ուստի ապաշխարության հրապարակային կարգն իր տեղը հետզհետե զիջում է անհատական խոստովանությանը։



692 թ. գումարված Կ. Պոլսի Գ տիեզերական ժողովի 102-րդ կանոնը եւս սահմանում էր ապաշխարության կարգը։ Տարբեր ժամանակաշրջանում եկեղեցական տարբեր ժողովներ սահմանել ու հաստատել են ապաշխարության արարողակարգին վերաբերող կանոններ։

Արդեն Թ դարավերջին հրապարակային խոստովանությունը գրեթե ամենուր փոխարինվեց

անհատական ապաշխարությամբ։

Տերտուղիանոսն ապաշխարության մասին ասում է. «Ո՛ր մեղսագործ, հույսդ դիր ապաշխարության վրա, կառչի՛ր դրան, ինչպես նավաբեկյալը՝ փրկարար լաստից։ Այն քեզ դուրս կբերի մեղքերի անդունդից եւ կհասցնի աստվածային ողորմածության նավահանգիստը...» («О покаянии. Богословские труды», сб. 26, Москва, 1985, с. 226)։

Ըստ եկեղեցական հայրերի՝ ապաշխարությունը պետք է տարբերել խոստովանությունից։

առանց անկեղծ զղջման ու խոստովանանքի ապաշխարությունն արժեզրկվում է։

Ինոկենտիոսը գրում է. «Ապաշխարությունն ու խոստովանությունը նույն կերպ չպետք է հասկանալ, ապաշխարությունը մի բան է, խոստովանությունը՝ մեկ այլ... Անիրաժեշտ է մեղքերը մշտապես խոստովանել Աստծո առջեւ. ապաշխարությունն ու անկեղծ զղջումը մարդուն մոտեցնում են երկնային արքայությանը եւ Սուրբ Հոգուն, իսկ խոստովանությունն առանց զղջման եւ ապաշխարանքի բնավ օգուտ չի բերում մարդուն, այլ ձեռական ու կեղծ խոստովանանքը կործանում է նրան՝ դարձնելով առավել մեղսագործ»։

Քրիստոնեության վաղ շրջանից սկսյալ՝ հավատացյալները մեղքերը խոստովանում էին օձյալ հոգեւորականին, որը լսում էր նրանց, խորհուրդներ տալիս, աստվածահաճ ուղի մատնանշում եւ արձակում մեղքերից։

Կղեմես Հոմեմեացին առանձնական ապաշխարության մասին գրում է. «Եթե մարդու սրտում թաքնված է նախանձ, անազնվություն կամ այլ չարիք, սեփական հոգու փրկության մասին մտաճգնվողը չպետք է երկյուղի դրանք խոստովանել հոգեւորականին, քանզի նա Աստծո փրկարար խոսքի եւ կենարար աղոթքի միջոցով կբժշկի» («О покаянии. Богословские труды», сб. 26, с. 228)։ Կորնթացիներին ուղղված Բ

թղթի իր մեկնության մեջ նա ասում է. «Քանի դեռ այս աշխարհում ենք, պետք է զղջանք ողջ սրտով եւ հրաժարվենք մեղքերից, որոնք մարմնով գործեցինք... քանզի այս աշխարհից հեռանալուց հետո չենք կարող ո՛չ խոստովանել, ո՛չ ապաշխարել» (Գ. Թեր-ճիմանյան, ԱՊ. աշխ., էջ 24)։

Անկյուրիայի 314 թ. եկեղեցական ժողովի 5-րդ կանոնը վերաբերում էր Ապաշխարության խորհուրդը կատարող հոգեւորականներին, որոնք մեղքերին թողություն տալու իրենց իրավունքն ու իշխանությունը ժառանգել էին առաքյալներից։

Ըստ եկեղեցական հայրերի՝ խոստովանահայրը պետք է օժտված լիներ որոշակի արժանիքներով՝ առաքինությամբ, հեզությամբ, պարկեշտությամբ, խոհեմությամբ, գաղտնապահությամբ («Писания отцов и учителей Церкви», т. 1, Москва, 1863, с. 140)։ Այս մասին Որոգիները գրում է. «Չգո՛ւյշ եղիր եւ քո անօրինությունները խոստովանելու համար ջանա գտնել այնպիսի մեկին, ով գիտե հիվանդների հետ հիվանդ լինել, սզացողների հետ արտասվել եւ կարեկից ու ցավակից լինել»։

2 դարավերջին ձեւաւորվեց առանձնական ապաշխարության արարողակարգը, եւ այս գործում մեծ դերակատարում ունեցավ Հովհան Անապատականը (596 թ.)։ Վերջինիս անունով հայտնի է «Նոմոկանոնը»։ Այս շրջանում համակարգվում է ապաշխարության արարողակարգը, հաստատվում՝ զղջման ու թողության աղոթքների հաջորդականությունը։

Շարունակությունը՝ էջ 8

ԵՐԱՆԵՆԻ ՍՈՒՐԲ ԲՎՐԱԵՐԻ՝ ԿԱՊԱԴՊՈՎԱԿԻՈՅ ԿԵՍԱՐԻՎՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ [ԽՕՍՔԸ] ԴՎՔԻ ՄՎԱՆ

Ա. «Փող հնչեցրե՛ք ամսագլխին, - ասում է, - ձեր նշանաւոր օրուայ տարեդարձին» (Խմմտ. Սաղմ. 2 /ՁԱ/ 4 եւ Դեւտ. ԻԳ 24)։ Սա է հրամանը մարգարեական։ Ցանկացած մեծածայն փողից եւ բարեգուշակ երաժշտական գործիքից աւելի [ուժգին]՝ ընթերցուածը մեզ ցոյց է տալիս տօնական [օրերի] սկիզբը։ Պահքի շահեկանութիւնը սովորեցինք Եսայի [մարգարեից], որը բաց մերժելով պահքի հրեական [ծելը]՝ ճշմարիտ պահեցողութեան [կարգը] ցոյց տուեց մեզ։ «Պահքը մի՛ անցկացրէք հակառակութեամբ եւ կռիւներով, այլ քանդեցէ՛ք անիրաւութեան բոլոր հանգոյցները» (Եսայ. ԾԸ 4, 6)։ Նաեւ Տէրն է [ասում]։ «Տրտմեալ [տեսք] մի՛ ընդունիր, [որ մարդկանց այնպէս երեւաւ, թէ ծով եւ պահում], այլ օծի՛ր գլուխդ [եւ լուա՛՛ երեսդ, որ մարդկանց չերեւաւ իբրեւ ծով պահող]» (Մատթ. 2 16, 17)։ Ուստի առաջիկայ օրերին պահենք մեզ, ինչպէս սովորեցրին. ոչ թէ մռայլ [եւ տրտում], այլ զուարճ [ու կենսախիւն], որպէս վայել է սրբերին։ Ոչ ոք տրտում [վիճակով] պսակ չի ընդունում եւ ոչ ոք տխրութեամբ յաղթութիւն չի հաստատում, [ուստի] մի՛ տրտմիր բժշկուելիս։ Ճիշտ չէ չբերկրել անձի [հոգեւոր] առողջութեամբ եւ տրտմել կերակրից զերծ մնալու համար՝ դրանով իսկ ցոյց տալով, որ աւելի հակուած էք հոգալու ցանկութիւնը որովայնի, քան ձեր անձի հոգեւոր խնամքի մասին, քանզի որո-

վայնի մասին մտաճգնուելը լոկ դրա շահն է, իսկ պահքը շնորհ է հոգու համար։

Ուրախացի՛ր [եւ ցնծա՛], Բժիշկը քեզ դեղ շնորհեց, որ ջնջում է մեղքերը։ Եւ ինչպէս մանկան որովայնում առաջացած ճիճուներն են ոչնչանում սուր դեղերով, նոյն կերպ եւ խորքերում հաստատուած մեղքերն են սպանում պահքով, որ ճշմարտապէս արժան է [հոգու սպեղանի] անուանել։

Բ. «Օծի՛ր գլուխդ եւ լուա՛՛ երեսդ» (Մատթ. 2 17). խօսքը քեզ խորհրդին է կոչում։ Իւղեալն օծում է, լուացուողը՝ մաքրում։ Զո մէջ ամփոփիր այս օրինադրութիւնը։ Մաքրի՛ր անձդ մեղքերից։ Սուրբ իւղով օծի՛ր գլուխդ, որ հաղորդուես Քրիստոսին եւ այդպէս ընթանաւ դէպի պահք։ [Եւ] «կեղծաւորների նման չապականես դէմքդ» (Մատթ. 2 16)։ Երեսը մռայլում է, երբ ներքին վիճակն ստուերում է արտաքին՝ կեղծ ձեւով, [որ] ինչպէս վարագոյր, շղարշում է սուտը։ [Ինչպէս] դերասանը թատրոնում օտար դէմքով է հանդէս գալիս, ծառան բազում անգամներ տիրոջ դէմքով է երեւում, եւ ռամիկը՝ արքայի։ Նոյնպէս եւ այս կեանքում շատերը [դէր] են խաղում՝ այլ բան ի սրտի կրելով եւ բոլորովին այլ բան ցոյց տալով մարդկանց. ուստի մի՛ ապականէք ձեր երեսները։ Ինչպիսին ես դու, ճիշտ այդ ձեւով յայտնուիր [միասնեան]։ Զեզ տրտում ձեւացնելով՝ իբրեւ ժուժկալ հանդէս չգաս կամ փառքի հետամուտ լինես՝ խստամբեր երեւալով։ Անգամ բարե-



գործութիւնն օգուտ չէ, երբ դրա մասին թմբկահարում են, նոյնպէս եւ պահք պահելու մասին հրապարակաւ յայտնելուց շահ չկայ, [որովհետեւ այն], ինչ արւում է ցուցադրութեան համար, յալիտեանկան պտուղներ չի տալիս, այլ կործանում է մարդկային գովասանքով։ Այսուհետ [խիւղով եւ] զուարճութեամբ ընթացի՛ր դէպի պարգենները պահքի. պահքի, որ սկզբնաւոր է՝ ո՛չ հնանում է, ո՛չ ծերանում, այլ միշտ նորոգում է, փթթում եւ ծաղկում։

Գ. Կարծում ես պահքի լինելութեան սկիզբն օրէնքի ժամանակների՞ց են դնում։ Պահքն անգամ օրէնքներից հին է։ Եւ եթէ փղըրինչ համբերես, կտեսնես խօսքերիս ճշմարտացիութիւնը։ Մի՛

կարծիր, թէ պահքի սկիզբը եօթներորդ ամսի տասներորդ օրը՝ Իսրայելի մեղքերի քաւութեան հրամանն է (Դեւտ. ԺԶ 29, ԻԳ 27)։ Ե՛կ խորամուխ լինենք պատմութեան մէջ եւ քննենք պահքի առաջանալու սկիզբը, որովհետեւ նորագիւտ բան չէ այն, այլ հայրերից եկող գանձ։ Հնութեամբ աչքի ընկնող ամեն բան ակնածանք է ներշնչում։ Պատկառիր պահքը ալեգորիկութիւնից։ Այն մարդկութեան հասակակիցն է։ Պահքը դրախտում սահմանուեց։ Եւ առաջին պատուիրանը, որ ստացաւ Ադամը, [հետեւեալն էր]՝ «Բարու եւ չարի գիտութեան ծառից մի՛ կերէք» (Ծննդ. Բ 17)։ Իսկ «մի՛ կերէք»-ը պահքի եւ ժուժկալութեան օրէնքի սահմանումն է։

Եւ եթէ Եւան պահեցողութեամբ [զսպեր իր անձը եւ] չճաշակեր ծառի [պտուղը], մենք այժմ պահք պահելու կարիք չէինք ունենայ, «որովհետեւ առողջներին բժիշկ պէտք չէ, այլ՝ հիւանդներին» (Մատթ. Թ 12)։ Ախտահարուեցիւք մեղքով, կբժշկուենք ապաշխարութեամբ։ [Բայց] ապաշխարութիւնն առանց պահքի ապարդիւն է։ «Անիծեալ լինի երկիրը», «փուշ ու տատասկ թո՛ղ աճեցնի քեզ համար» (Ծննդ. Գ 17, 18)։ Զեզ հրամայուեց տրտմել եւ ոչ թէ փափուկ կեանք վարել։ Պահքով վարձահատոյց եղիր Աստծուն։ Դրախտում եղած կեանքը պահքի պատկերն է. ոչ միայն այն բանով, որ սակաւապետութեան շնորհիւ հրեշտակներին եր նմանում մարդը, այլ նաեւ նրանով, որ յետագայում մարդկային մտքին այցելած կերակուրները դեռ չէին գտնուել դրախտում՝ ո՛չ գիւնարբուքը, ո՛չ կենդանիների զենումը եւ ո՛չ [այն ամենը], որ պղտորում է մարդկային սիրտը։

Դ. Քանի որ պահքը չպահեցիւք, արտաքուեցիւք դրախտից։ Այժմ եկէ՛ք պահեցողութեամբ ընթանալ, որպէսզի վերստին նոյնը մտնենք։ Չե՛ս տեսնում Դազարոսի [օրինակը], թէ ինչպէս պահքի շնորհիւ դրախտ մուտք գործեց (Ղուկ. ԺԶ 20-31)։ Անհնազանդութեամբ մի՛ նմանուիր Եւային, մի՛ ընդունիր օձի խորհուրդները, զսպուածութիւն ցուցաբերի՛ր կերակուր ուտելիս։ Մարմնական հիւանդութիւնը եւ մարմնի տկարութիւնը պատճառ մի՛ բեր, որովհետեւ ի՛նձ չես ներկայացնում դրանք, այլ ամեն բան Գիտեցողին։ [Ասա՛՛ ինձ]՝ պահեցողութեամբ չե՛ս կարող [առաջ ընթանալ], իսկ քո կեանքում ամեն ինչով յազենալ եւ մարմինդ կերակուրների ծանրութեամբ ջախջախել կարո՞ղ ես։

Շարունակությունը՝ էջ 9

Սկզբը՝ թիվ 5

Հայաստանի անկախության տարիներին Հոփի. Շիրազի ստեղծագործությունները տպագրելու խանգարիչ պատճառները թեև նախորդից տարբեր, սակայն մասամբ են միայն բացատրելի: Նախ՝ առայժմ նվազագույն են տպագրության պետական միջոցները, եւ Հոփի. Շիրազի ժառանգներն էլ չունեն անհրաժեշտ կյուրաքանկան կարողություններ, երկրորդ՝ այդպես էլ չի ձեռավորվել Հոփի. Շիրազի անունով հիմնադրամ, որով հնարավոր լիներ կազմակերպել նրա երկերի վերահրատարակությունն ու քայքայվող ձեռագրերի տպագրությունը:

Ինչպես տնտեսական դեռես չհաղթահարված ճգնաժամի, այնպես էլ գրքի նկատմամբ համընդհանուր հետաքրքրության նվազման պայմաններում մնում է ապավինել հովանավորների աջակցությանը, բայց այս պարագայում էլ առկա է տպագրական ներդրվող ծախսերը գոնե մասամբ փոխհատուցելու կասկածը: Ահա այս պայմաններում հայ պոեմի գլուխգործոցներից մեկը՝ Հոփի. Շիրազի «Թոնդրակեցիները», վերջապես հանվում է գրողներից, մաքրվում մոռացության փոշուց եւ արդեն որպես կայացած ու տպագրված գիրք՝ իր ստեղծումից շուրջ 60 տարի անց առաջին անգամ եւ ամբողջականորեն դրվում է ընթերցողի սեղանին:

«Թոնդրակեցիները» պոեմը, մեր գրույցներում հենց հեղինակի վկայությամբ, նախապես միահյուսված է եղել 1950-1951 թթ. գրված «Անի» պոեմին՝ որոշ «ինքնավարությամբ» որպես նրա մասերից մեկը: Սակայն հետագայում՝ Ստալինի մահից անմիջապես հետո, կյուրքի խոր ուսումնասիրության, գաղափարական հարցադրումների, բովանդակային, ծավալային եւ

Թոնդրակյան շարժումը եւ նրա դարագլուխներին դասադարձող գեղարվեստական համադասկերը Հոփի. Շիրազի «Թոնդրակեցիներ» դոնմում

կառուցվածքային պահանջների թելադրանքով՝ դրանք հեղինակը առանձնացրել ու դարձրել է թեկուզ շատ մերձավոր, բայց իրարահաջորդ ու գրեթե միահյուսված պատմաքաղաքական իրավիճակներ պատկերող երկու ինքնուրույն ստեղծագործություններ:

Արդեն 1954 թ. կար «Թոնդրակեցիները»՝ որպես առանձին եւ ինքնուրույն ստեղծագործություն, որն իր պատկերած դարաշրջանով եւ էպիկական գործողություններով, գաղափարագեղագիտական նպատակադրումներով ու քաղաքական հարցադրումներով հաջորդում է «Անի» պոեմին, որի էջերում թոնդրակյան աղանդավորական շարժման՝ որպես դարաշրջանում առկա հասարակական-քաղաքական երեւոյթի մասին հեղինակի կամ հերոսների խոսքում անհրաժեշտաբար պիտի լինեին թեկուզ հպանցիկ ակնարկներ: Սակայն թոնդրակյան շարժումը մեր ժողովրդի կյանքում ունեցել է այնպիսի ցավալի ճակատագրական դեր, որ պետք է արժանանար առանձնահատուկ գնահատության ու գեղարվեստական մեկնության:

Անշրջանցելի մի խնդիր կա՝ կապված պատմագեղարվեստական երկի տեսության, նրա արդիականության եւ գնահատման չափանիշների հետ:

Գրողն ինչո՞ւ եւ ե՞րբ է դիմում պատմական անցյալին:

Հենց այնպես նա պատմությանը չէր դի-



մի՝ ինչ-ինչ դեպքեր ու իրադարձություններ սոսկ վերապատմելով արժեւորելու համար: Իսկ հայոց պատմության՝ դրամատիկ ու ողբերգական անցքերով հարուստ 10-11-րդ դարերը արժեքավոր ու ուսանելի, արդիական շատ բան են պարունակում նորագույն ժամանակների համար:

Պատմագեղարվեստական երկի գնահատման գլխավոր չափանիշը՝ պատմականությունը, կարելու է մի իրողություն. գեղարվեստի ճշմարտությունը բնավ չափիտի հակասի պատմական ու

կենսական ճշմարտությանը, այլապես գրողի ստեղծագործությունը կդառնա կեղծ ու անարժեք: Իսկ Հոփի. Շիրազի պատմագեղարվեստական երկերը՝ «Տիգրան Մեծի վիշտը եւ հավերժությունը», «Մամիկոնյան սուրբը», «Անի», «Սիրանամե», «Հայոց դանթեականը», գերազանցապես հյուսված են պատմական հենքի վրա եւ ուղղակիորեն պատմության խորքային գեղարվեստականացում-վերակենդանացումներ են նորագույն ժամանակների դիտանկյունից:

Շարունակությունը՝ էջ 9



Սկզբը՝ թիվ 3, 5

Արդեն նշել ենք, որ 80-ականների երկրորդ կեսից «Մշակ»-ի վերահրատարակվելուց հետո Արծրունին փոքր-ինչ պակասեցրել էր հարձակումները այլ լրագրերի վրա, կամ գոնե դրանք չէին կազմում ֆեյխտոնների բովանդակության մեծամասնությունը: 80-ականների վերջերին այս առումով ֆեյխտոնիստը կրկին ակտիվանում է՝ հարձակվելով արդեն հիմնականում Արգար Հովհաննիսյանի եւ նրա խմբագրած «Արձագանք»-ի ու Ա. Արասխանյանի «Մուրճ» ամսագրերի վրա: Այս դեպքում ֆեյխտոնիստի թիրախը դառնում են ոչ միայն այս ամսագրերը, որոնց 1890-1891 թվականներին Ասիացի ամբողջական ֆեյխտոններ է «նվիրում», այլեւ այնտեղ տպագրվող հայտնի ու անհայտ շատ հեղինակներ: Ասիացին չի խորշում նաեւ անձնական վիրավորանքներից եւ Արասխանյանցին ոչ միայն մեղադրում է անսկզբունքայնության մեջ, այլեւ տալիս շատ վիրավորական բնութագրումներ. «Մենք ամեն տեսակ կլոուններ տեսել ենք այլեայլ ցիրկերում, բայց Ավետիս Արասխանյանցի պես հանդուգն աչքակապություններ անող գրական կլոուն դեռ տեսած չենք...» (1890, հ. 36): Արծրունին նման անողոր վերաբերմունք է դրսևորում նաեւ «Մուրճ»-ում տպագրված «Երեւանում երեւեցած մի նոր բանաստեղ-

դարձում «Մուրճ»-ի բանաստեղծներից Ծատուրյանի, Մանվելյանի եւ Հ. Թումանյանի բանաստեղծությունները՝ հատկապես սուր քննադատության ենթարկելով Թումանյանի «Կուրծքս երբեմն եմ է գալիս եւ հուզվում» բանաստեղծությունը: Ասիացին սուր քննադատություն է հնչեցնում նաեւ Արգար Հովհաննիսյանի հասցեին՝ անվանելով նրան «կեղծավոր աղվես»: Ավելացնենք, որ այսպիսի մեղադրանքներից ու պիտակներից զերծ չէին մնում նաեւ Նույն «Մուրճ»-ն ու «Արձագանք»-ը: Վերջինս 1890-ի համարներից մեկում Արծրունուն համարում է «թզուկ»՝ տարակուսանք հայտնելով, թե ինչու է ամբողջ հայոց մամուլը զբաղված մի թզուկով:

Կյանքի վերջին տարում՝ 1892-ին, Ասիացին ընթերցողներին միայն 3 անգամ ներկայացավ իր ֆեյխտոններով, որոնցից վերջինը տպագրվեց մահվանից մոտ 2 շաբաթ առաջ (դեկտեմբերի 10-ի 142-րդ համարում):

Ավելացնենք նաեւ, որ քսանամյա խմբագրական գործունեության ընթացքում Արծրունին մշտապես իր եւ «Մշակ» լրագրի ուշադրության կենտրոնում պահեց նաեւ Հայ Եկեղեցու եւ հոգեւորականության խնդիրները: Նշանավոր խմբագիրն ընդունում է, որ դարերով մեր ազգը պահպանող ազգային հիմնարկությունը Եկեղեցին է

ՖԵԼԻԵՏՈՆԻ ԺԱՆՐԸ «ՄՇԱԿ» ԼՐԱԳՐԻ ԷՋԵՐՈՒՄ (1870-1890-ական թթ.)

ծի»՝ Սաֆի-Սատիրի (Արտակ Տեր-Սարգսյան) նկատմամբ: Հեղինակը մեղադրում է նաեւ հասարակությանը, որ թույլ է տալիս «այդպիսի գրական կլոունների, գրական աֆերիստների» (զանազան արասխանյանցներ, հարոներ կամ սաֆի-սատիրներ) առաջնորդել սեփական գրական ճաշակը: Ավելացնենք, որ 1891 թ. հ. 90-ում էլ Արծրունին իր ֆեյխտոնի կյուրք է դարձնում «Մուրճ»-ի բանաստեղծներից

«Մշակ», 1878, հ. 212)՝ նաեւ նկատելով, որ Եկեղեցու եւ հոգեւորականների խնդիրները մշտապես պետք է լինեն հասարակության ուշադրության կենտրոնում. «Մենք առաջարկում ենք, որ ժողովուրդը հոգա այն բանի վրա, որ մեր քահանաները ոչ թե մուրացկաններ լինեն, այլ որպես Եկեղեցական, եւ միեւնոյն ժամանակ ժողովրդական պաշտոնյաներ՝ ապահոված լինելով հաստատ ռոճիկով» («Մշակ», 1874, թիվ 11):

Ավարտելով Արծրունու ֆեյխտոնների ընկությունը՝ պիտի նկատենք, որ հեղինակը, շատ դեպքերում չպահպանելով ժանրի կանոնները, կա՛մ դրանց սահմաններն ընդլայնում էր, կա՛մ ավելի նեղացնում՝ ֆեյխտոնը վերածելով անձնական վիրավորանքներ հասցնելու հաջող ամբիոնի: Ակնհայտ է, որ բոլոր այն դեպքերում (հատկապես 1880-ականների կեսերից սկսած), երբ Արծրունին կարողանում էր հաղթահարել եւ հեռու մնալ անձնական բանավեճերից, նրա ֆեյխտոնները շատ ավելի հաջողված էին ստացվում: Մյուս կողմից՝ նրա ֆեյխտոններն իրենց ե՛ւ ձեռով, ե՛ւ բովանդակությամբ ավելի ընդհանուր, հասարակական էին, շոշափում էին առօրյա խնդիրներ, ինչն էլ հեղինակին հաճախ հեռացնում էր սուր ու երգիծական դատողություններից՝ կյուրք մոտեցնելով հրապարակախոսական վերլուծության: Գրեթե բոլոր ֆեյխտոններում հետեւողական հրապարակախոսը երգիծում էր հասարակական կյանքի այն ոլորտները, որոնց բարեփոխմամբ շահագրգռված էր: Ժանրի երգիծական բնույթն ավելի լայն հնարավորություններ է ընձեռում հեղինակին՝ թույլ տալով ծաղրել ու խաղաղանել իր պատկերացրած բացասական երեւոյթները: Իհարկե, Արծրունու ֆեյխտոններում անկա ծաղրը հեռու էր երգիծաբանին բնորոշ նուրբ երանգներից, սակայն հեղինակը միշտ հիշեցնում

էր, որ նպատակ չունի (նաեւ ֆեյխտոնն այդպես չպետք է ընկալել) ընթերցողին ծիծաղեցնելու, այլ բավարարվում է միայն ուշադրության արժանի երեւոյթներ ներկայացնելով: Ինչեւէ, ֆեյխտոնիստ Արծրունին, եթե նույնիսկ ոչինչ չի ավելացնում հայ ֆեյխտոնի պատմությանը, ապա գոնե լրացնում է սեփական ծրագրերը, ամբողջացնում ասելիքը՝ իր յուրօրինակ հումորով փորձելով հասարակությանը հեռու պահել վտանգավոր ու առաջադիմական ոչինչ չպարունակող երեւոյթներից:

Ինչպես Արծրունու մյուս ստեղծագործություններին տրված գնահատականներում, այնպես էլ ֆեյխտոնները գնահատելիս տեսակետները խիստ ծայրահեղ ու իրարամերձ են եղել: Դեռես ժամանակին իր գրական հակառակորդները (մենք հիշատակել ենք Շիրվանզադեի տեսակետը) նրա ֆեյխտոնները համարում էին թույլ եւ չհաջողված, իսկ իր կողմակիցները (հատկապես Լեոն) նրան նույնիսկ համարում էին մեզանում ֆեյխտոնի ժանրի սկզբնավորողներից: Իրականությունը, սակայն, այն էր, որ Արծրունին իր ֆեյխտոններով իսկապես նպաստեց այդ ժանրի տարածմանը՝ լրագրերում ու ամսագրերում ապահովելով ֆեյխտոնի ուրույն տեղը: Իհարկե, Լեոյի գնահատականը եւս ծայրահեղ ու չափազանցված է («Ասիացին մի հատ էր մեզանում. ռուսահայ գրողների մեջ նա ամենատաղանդավոր երգիծաբանն էր») (Լեո, Երկերի ժողովածու, հ. 6, Ե., 1987, էջ 472), սակայն Ասիացին կարողացավ շուրջ 20 տարվա ընթացքում պահպանել ուշադիր արձանագրողի կոչումը՝ գեղարվեստական ուժեղ կամ թույլ պատկերներով զարդարելով «Մշակ»-ի էջերը:

Արշալույս ԳԱԼՍՏՅԱՆ
Բանասիրական գիտ.
թեկնածու, դոցենտ



Տավուշի մարզի Վարազավան գյուղից 2 կմ դեպի արեւմուտք՝ Անապատ սարի լանջին է գտնվում Նոր Վարազավանքի վանական համալիրը: 12-13-րդ դդ. կառուցված եկեղեցական այս համալիրը միջնադարյան Ռայաստանի նշանավոր մշակութային կենտրոններից մեկն է: Պատմական աղբյուրներում եկեղեցին հիշատակվում է Անապատ, Վարազա Սուրբ Նշան վանք, Նոր Վարազավանք անուններով: Վարազավանք անվանումը համալիրն ստացել է հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմական մի ուշագրավ իրադարձության արդյունքում: Ինչպես հայտնի է, Խաչվերացի երրորդ կիրակին Վարազա Սուրբ Խաչի տոնն է: Խաչի տոներին այս մեկն ամենահայեցին է, քանի որ կապված է հայոց աշխարհում քրիստոնեության տարածման բուն ակունքներին: Պատմությունը հետեւյալն է. Քրիստոսի համբարձումից հետո անհավատ հրեաները տարան եւ պահեցին Խաչափայտը: Երբ Ռոմի կայսր Կոդրիոսի կինը՝ Պատրոնիկեն, ուխտի է գալիս Երուսաղեմ, փափագում է տեսնել Տիրոջ գերեզմանն ու Խաչափայտը: Ուխտը կատարելուց հետո թագուհին խնդրում է առաքյալից սուրբ Խաչափայտից մի մասնիկ շնորհել իրեն:

Նոր Վարազավանք

Մասունքը թագուհին իր հետ Ռոմ է տանում, որն այնտեղ մնում է այնքան ժամանակ, մինչեւ Ռիփսիմը իշխանուհին, իրեն Աստծուն նվիրելով, կուսանոց է մտնում, որի մայրապետն էր Գայանե կույսը:

Ռիփսիմեն սուրբ Խաչի մասունքը միշտ կրում էր իր պարանոցին, որը նրան պահպանում էր չարի ամեն տեսակի ներգործություններից: Իսկ երբ Դիոկղետիանոս կայսեր օրոք սկսվում են հալածանքները քրիստոնյաների դեմ, վանքի կույսերը խմբով Ռայաստան են փախչում եւ ապաստանում Վանի գավառի Վարազա լեռան մոտ: Սակայն որոշ ժամանակ անց, երբ բացահայտվում է նրանց թաքստոցը, փախուստի են դիմում Ռայաստանի խորքերը, իսկ մասունքը հանձնում են տեղի ճգնապետից երկու քահանաների խնամքին: Սակայն վերջիններիս մահից հետո մոռացվում է Խաչափայտի մասունքի տեղը: Եվ դարեր շարունակ հավատացյալ ժողովուրդն աղոթք է արել առ Աստված, որ Նա ցույց տա սուրբ մասունքի տեղը: Ի վերջո՝ 7-րդ դարի կեսերին, մոտավորապես 660-ին, Վարազա լեռան ստորոտում բնակվող Թողիկ ճգնավորին եւ նրա աշակերտ Յովելին մի զարմանահրաշ տեսիլքով ցուցվում է սուրբ մասունքի գտնվելու վայրը: Հենց այդ վայրում էլ կարճ ժամանակ անց մի գեղեցիկ եկեղեցի է կառուցվում եւ կոչվում Վարազավանք: Այս լուրը հասնում է Ներսես կաթողիկոսին, որի հրամանով եկեղեցական տոներին ավելանում է Վարազա Սուրբ Խաչին նվիրված տոնը:

Վարազա լեռան լանջին կառուցված վանքը կանգուն է մինչեւ այսօր, ցավոք՝ փշալարերից այն կողմ՝ թուրքահպատակ տարածքում:

Ներկայիս Նոր Վարազավանքը մինչեւ 13-րդ դարը կոչվել է Անապատ, այնուհետեւ վերանվանվել է Նոր Վարազավանք, երբ Վասպուրականի Վարազավանքի վանահայր Դուկասը, Ջալալեդդինի հրոսակներից հալածված, վերցնելով վանքի հռչակավոր սուրբ Նշանը՝ Տիրոջ Խաչափայտը

տի մասունքը, 1237-ին տեղափոխվել է Նոր Բերդի Կյուրիկյան իշխանության այս հոգեւոր կենտրոն:

Նոր Վարազավանքի վանական համալիրը բաղկացած է Սուրբ Նշան եւ Սուրբ Աստվածածին եկեղեցիներից, 2 գավթից, մատուռից եւ տապանատնից: Նախապես՝ 1193-1198 թթ., կառուցվել են Անապատ կամ Սուրբ Նշան եկեղեցին եւ տոհմական տապանատունը՝ Նոր Բերդի Դավիթ իշխանի կողմից: Եկեղեցին պատկանում է հայկական երկաթիդ հուշարձանների հազվագյուտ տիպին եւ շատ նման է Սանահինի Սուրբ Յարություն եւ Հերերի Սուրբ Սիոն՝ 13-րդ դարի եկեղեցիներին: Մուտքի երկու կողմերին տեղադրված են բարձրարվեստ խաչքարեր:

Սուրբ Նշան եկեղեցուն հյուսիսից կից է թաղածածկ տապանատունը՝ կառուցված 1200 թ.՝ նույն Դավիթ իշխանի կողմից: Կառույցն առաջին հայացքից մատուռ է հիշեցնում, ունի 3.5 մ երկարություն եւ 2.3 մ լայնություն:

Սուրբ Նշան եկեղեցուն հարավից կից է փոքրիկ մատուռը՝ կառուցված 13-րդ դարի սկզբին, ունի 4.5 մ երկարություն եւ 3.2 մ լայնություն:

Եկեղեցու գավթից գտնվում է Սուրբ Նշան եկեղեցու արեւմուտքում, ունի ուղղանկյուն հատակագիծ: Ցավոք, կառույցն այժմ ավերված է: Պահպանվել է միայն գավթի հարավային պատը՝ եռակամար, գեղեցկաքանդակ մուտքով:

Վանքի հյուսիսային կողմում կանգուն է Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ կառուցված 1224-1237 թթ.՝ Դավիթ իշխանի որդի Վասակ 2-րդի կողմից: Ներքուստ խաչածեղ, չորս անկյուններում երկհարկանի ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն, գլանաձեւ բարձր գմբեթով շինություն է, ունի 15.4 մ երկարություն եւ 10.45 մ լայնություն: Մուտքը երկու կողմից է՝ արեւմուտքից եւ հարավից: Արեւմտյան մուտքի պատը հարդարված է կամարով՝ խճանկար հիշեցնող մուգ մանուշակա-

գույն եւ բաց կապույտ աստղաձեւ, շեղանկյուն եւ վեցանկյուն եզրագիծ ունեցող, կենդանակերպ ու բուսական չկրկնվող քանդակազարդ քարերով:

Եկեղեցուն արեւմուտքից կից է 1237-1261 թթ. վանքի վանահայր Յովհաննես Տուեցու կառուցած խոշոր, քառակուսի հատակագծով գավթից, որի ծածկն ամբողջովին քանդված է: Մուտքը երկու կողմից է՝ արեւելյան եւ հարավային:

Նոր Վարազավանքը հարուստ է գեղեցիկ քանդակներով, բազմաթիվ խաչքարերով, որոնք տեղ-տեղ օգտագործվել են նաեւ եկեղեցու կառուցման համար:

Եկեղեցին ժամանակին մեծ դեր է խաղացել երկրի հոգեւոր ու քաղաքական կյանքում:

19-րդ դարի սկզբին Նոր Վարազավանքի վանահայրն էր Գրիգոր Մանուկարյանը, որը 1804-1828 թթ. իր կամավորական ջոկատով ակտիվ մասնակցություն է ունեցել Արեւելյան Ռայաստանի ազատագրման գործում:

Այստեղ ժամանակին վանահայր է եղել նաեւ Մկրտիչ վարդապետ Խրիմյանը՝ ապագա հայոց կաթողիկոս Խրիմյան Ռայրիկը, որի ջանքերով 1862-ին պատմական Վարազավանքում ստեղծվել է գործել է Վարազա ժառանգավորաց վարժարանը: Ցավոք, Առաջին համաշխարհային պատերազմից հետո այս ամենը դարձավ մեր՝ հայոց պատմության հերթական տխուր էջերից մեկը:

Չնայած տխուր փաստերին եւ վանքի այժմյան վատթար վիճակին՝ Նոր Վարազավանքն այսօր էլ հոգեւոր եւ պատմամշակութային խոշոր կենտրոն է, եւ արդեն 15 տարի է՝ Ռայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Տավուշի թեմը յուրաքանչյուր տարի՝ սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում, Վարազա Սուրբ Խաչի տոնի կապակցությամբ կազմակերպում է ուխտագնացություն դեպի Նոր Վարազավանք:

ԱՆՈՂ ԱՐԱՍՏՐՅԱՆ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ

Սկզբը՝ էջ 6

Յովհանն ճգնակյացն իր մշակած ծիսակարգում անդրադառնում էր նաեւ նախապաշխարական աղոթքներին, հոգեւորականի առջեւ մեղքերի խոստովանության կարգին, հովվական խորհուրդներին եւ թողության աղոթքներին: Սակայն նրա մշակած ծիսակարգը բովանդակությամբ չափազանց ընդարձակ էր եւ ոչ բոլոր եկեղեցիներում էր կիրառվում: Հիմք ընդունելով «Նոմոկանոնը»՝ եկեղեցական հայրերը տարբեր վայրերում մշակեցին ապաշխարությանը վերաբերող կանոններ, որոնք կրում էին նաեւ տեղական ավանդույթների, սովորույթների, ծիսական համակարգի ազդեցությունը: Վերոնշյալ կանոնների մեջ առավել հայտնի է Ը դարում մշակված ու գործածված «Ապաշխարության կանոն»-ը, որի հեղինակն է Կ. Պոլսի Ստուդիայան վանքի վանահայր Թեոդոր Ստուդիտը: Այս կանոնադրության մեջ մանրակրկիտ մշակվել էին Ապաշխարության խորհուրդի բաղկացուցիչ տարրերը: Անհատական ապաշխարության մեջ կարեւորվում էր հոգեւորականի ու հավատացյալի միջեւ փոխադարձ վստահությունը. հավատացյալը պետք է լիովին վստահ լիներ, որ հոգեւորականը բացարձակ գաղտնի կպահեր իր խոստովանությունը: Այդ իսկ պատճառով քրիստոնեական բոլոր եկեղեցիներում մշակվում եւ սահմանվում են այս խնդրին վերաբերող կանոններ, որոնցով կարգալույծ էին արվում հավատացյալի խոստովանությունը հրապարակող հոգեւորականները: Անհատական խոստովանությունն ուներ դաստիարակչական եւ հոգեբանական դրական ազդակներ ու տարրեր, ամրապնդում էր հավատացյալ-հոգեւորական-եկեղեցի կապը: Սակայն ճշմարտության առջեւ մեղանչած չլինելու համար նշենք, որ ապաշխարության այս


ծելը հաճախ կիրառվել է նյութական միջոցներ ձեռք բերելու նպատակով:

Ե-թ դարերում Կաթողիկ եկեղեցում առավելապես կիրառվում էր առանձնական ապաշխարությունը, որն ամբողջական ու համակարգված է դառնում իր ծիսական կարեւորագույն տարրերով եւ աստվածաբանական դրույթներով: Կաթողիկ եկեղեցում մինչ օրս առավել տարածված է առանձնական ապաշխարությունը:

Յայ Եկեղեցու հայրերն ու հոգեւորականներն ի սկզբանե մեծ ուշադրություն են դարձրել սուրբ Պատարագի եւ խորհուրդների կատարմանը, արարողակարգին: Ապաշխարության խորհուրդով առավել ակնհայտ են դրսևորվում քրիստոնեական մարդասիրությունը, ներողամտությունն ու ողորմածությունը, ավելին՝ այս խորհուրդն ունի նաեւ հոգեբանական, բարոյադաստիարակչական բնույթ, ուստի մեր Եկեղեցու հայրերը մեծ կարեւորություն են տվել Ապաշխարության խորհուրդի ծիսակարգի մշակմանը: Այդ են վկայում արդեն Դ դարում շարադրված ապաշխարական աղոթքներն ու շարականները: Իսկ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» հանճարեղ երկը նկարագրում է անկյալ մարդու տառապանքը, հոգեվիճակը, տվայտանքը, զոջումը, աղաչանքներն ու աղոթքները, զոջումը, Աստծո հետ հաշտվելու հույսը: Վաղ շրջանում Յայ Եկեղեցում եւս կիրառվել են խոստովանության հրապարակային եւ առանձնական կարգերը: Անհատական ապաշխարության ժամանակ հավատացյալն իր մեղքերն առանձնաբար խոստովանում էր հոգեւորականին: Դվինի Բ եկեղեցական ժողովի (554 թ.) ԺԺ կանոնի համաձայն՝ կարգալույծ էր հռչակվում այն քահանան, որն իրեն ճշմարտության առջեւ մեղանչած չլինելու համար նշենք, որ ապաշխարության այս

երբեք զբաւն ապաշխարութեան ապաշխարողացն, նզովիւք լուծցի, եւ ամեն իրաւունք ջնջեսցի ի քահանայական ժառանգութեն» («Կանոնագիրք Յայոց», հ. Ա, Երեւան, 1964, էջ 240): Իսկ նույն ժողովի ԺԸ կանոնն արգելում է քահանաներին վարձ վերցնել խոստովանողից: Նման բազմաթիվ կանոններ են մշակել Յայ Եկեղեցու հայրերը, որոնք ջանացել են պահպանել քրիստոնեական բարոյական արժեքները: Հետագայում մեր Եկեղեցում անհատական կամ առանձնական խոստովանությունը փոխարինվել է հրապարակային կամ հավաքական խոստովանությամբ: Հրապարակային խոստովանության ձեւ է Յայ Եկեղեցում պատարագիչ եկեղեցականի՝ սբ Պատարագից առաջ՝ նախքան խորան բարձրանալը, ներկաներից հրապարակավ թողություն խնդրելը. «Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ առաջի ձեր, հա՛րք եւ եղբա՛րք, գաւմնայի մեղս, զոր գործեալ եմ...» («Ժամագիրք»):

Յայ Եկեղեցու վարդապետության համաձայն՝ խոստովանությունը կատարվում է Եկեղեցում՝ խոստովանահոր ներկայությամբ: Միայն ձեռնադրված հոգեւորական իրավունք ունի մեղքերն արձակելու: Նախքան Յաղորդությունը՝ հավատացյալները ծնկի են գալիս քահանայի առջեւ, եւ վերջինս ընթերցում է «Ժամագրքի» սկզբի «մեղաների» շարքը, որն սկսվում է «Մեղայ ամենասուրբ Երրորդութեան» աղոթքով: Հավատացյալները յուրաքանչյուր բաժնի ավարտին «մեղայ Աստուծոյ» խոսքերն են կրկնում: Քահանան ի պատասխան ասում է. «Աստուած թողութիւն շնորհեսցէ»: Ապա ընթերցվում են Ապաշխարության սաղմոսները: Քահանան աղոթում է, որ Աստված լսի մեղավորի աղաչանքն ու խոստովանությունը՝ դարձնելով նրան Սուրբ Յոգու տաճար: Ապա ընթեր-



Գործ՝ Տրանցիսկո դե Չուբազանի

ցում է Եսայի մարգարեից Ա 16-20, Եզեկիել մարգարեից՝ ԺԸ 21-23, Եփեսացիների թղթից՝ 2 10-24 համարները, եւ «Անառակ որդու» առակը (Դուկ. ԺԵ 11-32), որից հետո արեւմուտք դառնալով՝ երեք անգամ արտասանում է «Հրաժարիմք»: Այնուհետեւ բոլորը շրջվում են դեպի արեւելք եւ ասում «Հաւատամքք»: Այդ ամենից հետո միայն ապաշխարողը՝ մաքրված եւ թողություն ստացած, պատրաստվում է հաղորդություն ստանալու:

Յայ Եկեղեցին չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը, որոնք պահոց են, համարում է ապաշխարության օրեր. Մեծ պահքը նաեւ ապաշխարության շրջան է: Նախկինում Յայ Եկեղեցին ունեցել է ապաշխարության հատուկ օր՝ Ավագ հինգշաբթի, երբ կատարվել է «Կարգ ապաշխարողաց» ժամերգությունը, ապա՝ սուրբ Պատարագ:

Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ

Սկիզբը՝ էջ 6

Որքան գիտեմ, բժիշկները հիւանդներին ոչ թէ բազմազան ուտեստներ են նախանշում, այլ քաղցած կամ կիսաքաղց վիճակ: Եւ ի՞նչպէս է, որ այդ դէպքում կարող ես, իսկ միւսի պարագայում պատճառաբանում ես, թէ չես կարող: Ո՞րն է դիրքիս որովայնի համար. պատշաճ չափով սնունդ ընդունած վիճակում անցկացնել գիշերը, թե՛ [երբ] կերակուրների առատութեամբ ծանրացած մեկնում ես կամ [առաւել եւս] չես կարողանում [ընկողմանել] եւ հառաչելով յաճախակի մի կողմից միւսն ես շրջւում: Արդեօ՞ք նաւավարը բեռով ծանրացած նաւն [աւելի] դիրքի կուղղի եւ կփրկի, թե՞ քիչ բարձածն ու թեթեւը: [Եւ այդպէս է,] որովհետեւ շատ բեռնուած նաւը վրան հորդող ալիքներն ի վար են ընկղմում: Իսկ նաւը, որի նաւապետն այնքան խելացի է, որ դուրս է նետում աւելորդ բեռը, ալիքները հեշտութեամբ վեր են բարձրացնում՝ ոչ մի կերպ չվնասելով դրա բարձրութեանը: [Նոյն կերպ] եւ մարդկային մարմինը, որ յաճախ ծանրացել է յագեցութեամբ, հիւանդութիւնը հեշտութեամբ կընկղմի: Իսկ

ԵՐԱՆԵՆԻ ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՆԻ՝ ԿԱՊԱՂԱԿԻՈՅ ԿԵՆԱՐԻՎՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ [ԽՕՍՔԸ] ՊԱՇՔԻ ՄԱՍԻՆ



սես հօրից որդուն հաղորդելով աւանդեցին, ուստի եւ մեզ կարգով փոխանցուեց:

Դրախտում չկար ո՛չ գինի, ո՛չ կենդանիների գենմուկը, ո՛չ մսակերութիւն: Եւ ջրիեղէնից յետոյ էր, [որ ասուեց, թէ՛ «Ամեն մի կենդանի գեռուն թող կերակուր լինի ձեզ], ինչպէս խոտն ու բանջարն եմ տուել» (Ծննդ. Թ 3): Դրանց

զուսպ եւ թեթեւ կերակուրներով [սնուածը] խուսափում է ծանր հիւանդութիւնից, դիմակայում չար ձմռան նման վրայ հասած ալիքներին, [ինչպէս լաստն է ալեկոծութեան ժամանակ խուսանաւում վտանգաւոր ժայռերից]: Քո կարծիքով՝ աւելի դժուար է տեղից չշարժուելը, քան ընթանալը, եւ աւելի բարդ է հանգիստ մնա՞լը, քան պայքարելը: [Այդպէս է], որովհետեւ պնդում ես, թէ հիւանդների համար աւելի հեշտ է ճոխութեամբ վայելելը, քան պարզ եւ չափաւոր սնունդ ընդունելը: Կենսական ուժը հեշտութեամբ իւրացնում է հասարակ եւ չափաւոր կերակուրը՝ փոխանցելով այն մարմնին, իսկ համադրան եւ այլատե-

սակ ուտեստների առատութիւնը, որ հնարաւոր չէ ամբողջութեամբ մարսել, տարբեր ցաւերի եւ հիւանդութիւնների պատճառ է դառնում:

Ե. Բայց խօսքը թո՛ղ ուղղուի դէպի խորքերը պատմութեան՝ ցուցանելով պահոց ծագումը, թէ ինչպէս բոլոր սրբերն այն պահեցին իբրեւ հայրենի ժառանգութիւն, ա-

վայելումը թոյլատրուեց, երբ կորսուեց կատարելութեան [ոյսը]: Գինու մասին անտեղեակ լինելու օրինակ է Նոյը, որ իր կենցաղում չէր օգտագործել [մինչ ջրիեղէնը]: Եւ ոչ ոք երբեք չէր տեսել այն, եւ ոչ Նոյն էր փորձ ունեցել [ճաշակելու, ուստի] անզգուշութեամբ վնաս կրեց գինուց: «Նոյն... այգի տն-

կեց, խմեց դրա գինուց եւ հարբեց» (Ծննդ. Թ 20-21), ոչ թէ գինեւէր լինելու պատճառով, այլ որովհետեւ անփորձ էր, թէ ինչ չափով ընդունի: Ուստի գինի ըմպելու սովորոյթը դրախտից աւելի յետոյ է, իսկ պահոց պարկեշտութիւնը՝ սկզբնազոյն: Նաեւ տեղեկանում ենք, որ Մովսէսը պահքով մօտեցաւ լեռանը, այլապէս չէր համարձակուի [ոտք դնել] ծխացող գագաթին եւ չէր յանդգնի շարժուել դէպի մեզը, եթէ պահքով գինավառ չլինէր (*իմմտ*. Ելք ԻԴ 18, Բ Օրին. Թ 9): Եւ պահքի շնորհիւ նա ստացաւ Աստծու մատով տախտակներին դրոշմուած պատուիրանը: Եւ [լեռան] գագաթին պահքն օրինադրութեան նախասանջական (*առիթ իմա՛*) եղաւ, իսկ ստորոտին՝ որովայնամոլութիւնը կռապաշտութեան դրոշմը:

Շարունակութիւնը՝ էջ 10

Թոնդրակյան շարժումը եւ նրա դարազլուխներին դասադասող գեղարվեստական համադասկերը Նովի. Շիրազի «Թոնդրակեցիներ» դոնեմում

Սկիզբը՝ էջ 7

Առողջ մտածողությամբ ու սթափ հայացքով, անկուսակցական ու անկողմնակալ պատմագետի ու գեղագետի խորաթափանցությամբ է բանաստեղծը մխրճել հայոց պատմության խորքերը եւ այնտեղից պեղել ներկա ու գալիք սերունդների համար անհրաժեշտ եւ ուսանելի կարեւորագույն դրվագներ, վերակերտել է դրանք գեղարվեստի լեզվով՝ գրեթէ միշտ տալով իրողությունների եւ պատմական անձնավորությունների գեղարվեստականացման բացառիկ հաջող օրինակներ:

Ու թեեւ ինքն արձակագիր կամ դրամատուրգ-թատերագիր չէր, սակայն իրաշալի յուրացրել էր մեր մատենագիրներին ու պատմավիպասաններին, պատմությունը ներկայի շահերին ծառայեցնելու նրանց ու համաշխարհային մեծ գրողների ստեղծագործական փորձը: Նովի. Շիրազն այս իմաստով էլ բարձր էր գնահատում Խ. Աբովյանին, Ծերենցին, Մուրացանին, Թումանյանին, Դ. Դեմիրճյանին, Ստ. Չորյանին ու մանավանդ «ահեղ եւ անմրցելի» Բաֆուն, որի «Սամվել» պատմավեպից հաճախ էջերով անգիր արտասանում էր՝ դիտմամբ փոխելով սկսված անցանկալի գրույցի կամ բանավեճի թեման. «Սամվելը գունաթափվեցաւ...» եւ այլն: Նման իրավիճակներում հանկարծ հիշում եւ հիշեցնում էր Նովի. Թումանյանի էպիկական հրաշակերտություններից մեկից՝ «Սասունցի Դավիթ» պոեմից կտորներ. որոնց էպիկական հզոր շունչը դրսևորվել է նաեւ Նովի. Շիրազի դիտարկվող երկու պոեմներում: Սակայն պատմական ժամանակի ընդգրկման ու պատկերման տեսակետից «Անի» եւ «Թոնդրակեցիները» պոեմները մոտ են այնքան, որ նրանց մեջ որոշ գործողություններ եւ հերոսներ անխուսափելիորեն կարող էին փոխներթափանցել:

Պատմության հարահուսի մեջ կարճ ժամանակամիջոցը, մեկ կամ երկու տասնամյակների տարբերությունը երբեմն կարող են այնքան զգալի չլինել, բայց երբեմն էլ հենց այդ կարճ միջոցը՝ տասնամյակները, նույնիսկ մեկ տարին ու օրը կարող են շրջադարձային լինել՝ իրադարձությունների արագ զարգացումով բերելով պատմական դարաշրջանի



եւ իրավիճակի փոփոխությամբ պայմանավորված նոր բովանդակություն:

Քրիստոնեության ընդերքում, գրեթէ նրա հետ միաժամանակ, որպէս համաժողովրդական պաշտամունքի այլընտրանքային տարբերակ, ձեւավորված աղանդավորական շարժումները Հայաստանում եւ ուրիշ երկրներում բավական տեւական պատմություն ունեն. 4-6-րդ դդ. մծղյաններին ու բորբորիտներին 7-րդ դարում հաջորդել են պավղոսականները, որոնցից հետագայում շատ բան էին ծառանդել թոնդրակեցիները: Պատահական չէ, որ պոեմի որոշ հատվածներում եւ առհասարակ աղանդավորությունը դատապարտող դրվագներում Նովի. Շիրազը դառնությամբ ու կշտամբանքով հիշում է նաեւ պավլիկյաններին՝ որպէս թոնդրակյաններին նախորդած աղետավոր հասարակական շարժումներ: Իսկ պատմագիտական ու աստվածաբանական գրականության մեջ երբեմն այդ երկուսը դիտարկվում են միասնաբար՝ պավլիկյան-թոնդրակյան շարժում հորջորջումով:

Ինչպէ՞ս են աղանդավորական շարժումները գնահատվել ժամանակին, մանավանդ որ նկատված օրինաչափությամբ՝ դրանք հայոց պետականության առկայության, նրա ուժի եւ զարգացման վերելքի շրջանում որոշ չափով եւ իմաս-

տով կաշկանդվել են, իսկ երկրի թուլության եւ պետականության անկման շրջաններում, ընդհակառակը, աշխուժացել, դարձել կործանարարության չափ վտանգավոր:

Բագրատունյաց թագավորության վերելքի շրջանում 9-11-րդ դարերում, թոնդրակյան շարժումը կարծես ընկճված էր: Սակայն Անիի թագավորության վրա թշնամական հարձակումների եւ ներքին երկպառակությունների շրջանում Հայաստանի գրեթէ բոլոր քաղաքներում, նահանգներում ու գավառներում, գյուղերում ու ավաններում «անբուժելի քաղցկեղի արագությամբ» տարածվող այդ շարժումը խարխլեց Հայ Եկեղեցու եւ պետականության հիմքերը, պառակտեց մեր ազգային միասնականությունը՝ թշնամական շրջափակման մեջ հայտնված հայությանը կանգնեցնելով անլուծելի նոր խնդիրների առջեւ:

Թոնդրակեցիներն ու թոնդրակուհիները գործում էին ծածուկ, հույժ գաղտնի՝ թաքցնելով իրենց քայքայիչ գործունեության բուն դրդապատճառները: Ներքին երկպառակություններով ազգի ոգին ու ողնաշարը կոտրելով, պետությունից եւ Եկեղեցուց ժողովրդին հիասթափեցնելով ու հուսահատեցնելով, երկրի հիմքը՝ ընտանիքները քանդելով, կանանց համայնացման անպատկառ քարոզչու-

թյամբ դարձել էին իսկական աղետ հայության համար: Շարժման կենտրոն Թոնդրակում (որի անունով էլ մկրտվել է ապագային ու ապաբարոյական այդ տխրահռչակ շարժումը) ու ողջ Ապահունիքում, Հաբքում, Վարդապետում (Արցախում), Սյունիքում (մանավանդ Տաթևում ու Ցուրում կամ Ցուրաբերդում), Մանանդիում եւ Դարանաղիում, Վասպուրականում, Մոկքում, Այրարատում, Շիրակում եւ այլուր բարոյական ու մարմնական ախտերի տարածումով, Քրիստոսին անառակ կնոջից ծնված ապօրինի վիժվածք համարելով, սրբազան մյուռնը թափելով, քահանաների ու մյուս հոգեւորականների մորուքները բռնի խուզելով, կարգալուծ անելով կամ տանջահար սպանելով, եկեղեցիներն ու տաճարները քանդելով, հոգեւոր ծիսակարգերն արգելելով՝ խարխլեցին քրիստոնեական հավատքն ու թուլացրին երկիրը: Հետեւանքը եղավ այն, որ 11-րդ դարի 20-40-ական թթ. արդեն անկարելի եղավ պարսկա-բյուզանդական ու արաբական հարձակումներից պաշտպանել հայոց պետությունն ու նրա Անի մայրաքաղաքը:

Ինչպէս վերը տեսանք, պատճառը միայն սոցիալական չէր. այդ ներքին՝ իրոք հուժկու շարժումը, ավատատերերից ու եկեղեցուց հասարակական լայն խավերի համընդհանուր արդարացի դժգոհության արտահայտություն լինելով, վերածվել էր պետականակործան ու ազգակործան ահռելի սպառնալիքի, որի դեմ պետությունն անգամ անզոր էր պայքարելու:

Գրեթէ բոլոր բնակավայրերում ստեղծված թոնդրակյան աղանդավորական համայնքները, Նովի. Շիրազը կասեր՝ թոնդրաորջերը, միջնադարում ավելի քան ավերիչ ու կործանարար էին, քան տարերային ցանկացած աղետ կամ Հայաստանի վրա թշնամական ուրեւ հարձակում, որոնց դեմ համեմատաբար դյուրին էր պայքարելը:

Նովի. Շիրազի երկի նյութն արդեն իսկ դրամատիկական է:

Շարունակելի

Սամվել ՍՈՒՐԱՂՅԱՆ
Բանասիրական գիտ.
դոկտոր, պրոֆեսոր

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԿՈՐՈՒՄՏԸ ՄԵՐՕՐՅԱ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Մերօրյա իրականության մեջ մենք հաճախ ենք առերեսվում բարոյական արժեքների կորստի խնդրին: Նախ եւ առաջ նշենք, որ հայ հասարակությունը շատ հաճախ անբարոյականություն ասվածն ընկալում է նեղ իմաստով: Մեր ազգի ներկայացուցիչներից շատերն անբարոյականություն հասկացությունը շողկապում են բացառապես սեռական ազատ վարքի հետ: Սակայն ճշմարտությունն այն է, որ անբարոյականություն ասվածը շատ ավելի լայն եւ ընդգրկուն հասկացություն է, քան մեզինք շատերը պատկերացնում են: Անբարո վարքը բնավ միշտ չէ, որ կապված է ինտիմ կյանքի հետ: Իրականում գոյություն ունեն անբարոյականության տասնյակ, հարյուրավոր, իսկ գուցե եւ հազարավոր դրսևորումներ: Ավելի առարկայական լինելու համար բերենք մի քանի պարզ օրինակ. խաբեություն, խարդախություն, կաշառակերություն. բացասական երեւոյթներ, որոնք առնվազն անկախության տարիներին դարձել են մեր մշտական ուղեկիցները: Ճշմարտության առաջ չմեղանչելու համար ասենք, որ նշված արատավոր իրողություններն առկա են եղել տակավին խորհրդային ժամանակներում, սակայն ավելորդ չի լինի նշել, որ անբարո վարքի նշված դրսևորումների մասշտաբն այդ տարիներին համեմատաբար ավելի փոքր էր, քան մերօրյա Հայաստանում: Փորձենք վերլուծել եւ հասկանալ, թե ինչու խորհրդային շրջանի փոքրիշատե ազնիվ մարդիկ կորցրեցին իրենց

մարդկային կերպարը եւ բռնեցին անբարոյականության եւ հանցանքի ամոթալի ուղին: Այստեղ կարելի է առնվազն երեք պատճառ նշել. 1) խորհրդային Միության տարիներին իրավական համակարգը բավականին լավ էր աշխատում. սովետական օրենքները բավականաչափ խիստ էին եւ գործում էին ոչ թե թղթի վրա, այլ՝ իրականում, 2) սովետական գաղափարախոսությունը եւ դաստիարակությունը շատերին թույլ չէին տալիս խախտելու թե՛ գրված եւ թե՛ չգրված օրենքները, 3) խորհրդային ժողովուրդը բավականաչափ կայուն սոցիալական վիճակում էր գտնվում, ուստի եւ հարկ չկար սեփական ֆիզիկական գոյությունը պահպանելու համար դեմ գնալ բարոյական արժեքներին եւ բռնել հանցանքի ուղին:

Մեր ժամանակներում իրավիճակը տրամագծորեն այլ է. փաստացի գոյություն ունեն բազմաթիվ օրենքներ, որոնք պատիժ են նախատեսում թե՛ խարդախության, թե՛ կաշառակերության, թե՛ սեփական դիրքը չարաշահելու եւ թե՛ բազմաթիվ այլ հանցանքների ու իրավախախտումների համար, սակայն պետության կողմից ամրագրված օրենքները, որպես կանոն, գոյություն ունեն լոկ թղթի վրա եւ ոչ թե իրական կյանքում: Ուստի պատահական չէ, որ մեր երկրում կաշառակերության հապապետական եւ ազգային անվտանգությանն ուղղակիորեն սպառնացող երեւոյթը ծաղկունք է ապրում, իսկ խարդախությունն ու խաբեությունը, սուտը եւ գրպարտանքը դարձել են արդի իրականության անօտարելի տարրերը: Ամենազարհուրելին այն է, որ մեր հասարակության մի զգալի մասը բավականին հանդուրժող է նշված բացասական երեւոյթների նկատմամբ: Փորձենք հասկանալ, թե ինչու: Բանն այն է, որ խորհրդային Միության փլուզումից հետո փլուզվեցին նաեւ սովետական գաղափարախոսությունը եւ բա-

րոյական արժեհամակարգը: Անշուշտ, մենք չենք կարող պնդել, թե խորհրդային արժեհամակարգն անթերի էր եւ ընդունելի բացառապես բոլոր մարդկանց համար, սակայն ակնհայտ է, որ դրանում առկա էին շատ ու շատ դրական կողմեր, որոնք կոչված էին կանոնավորելու մարդկային փոխհարաբերությունները, ապահովելու սոցիալական կայունություն եւ արդարություն: Ներկայիս Հայաստանում նույնպես գոյություն ունի ազգային եւ պետական գաղափարախոսություն, սակայն չգիտես թե ինչու այդ գաղափարախոսությունը չի նպաստում նրան, որ մարդիկ դառնան ավելի ազնիվ, ավելի բարի, պարկեշտ, սկզբունքային եւ արդար: Ասվածից կարելի է երկու եզրակացություն անել. կա՛մ մեր ներկայիս ազգային գաղափարախոսությունը թերի է, կա՛մ էլ այն գոյություն ունի զուտ ձեւականորեն եւ ինչպես հարկն է չի պարտադրվում հասարակության լայն զանգվածներին: Եվ, իրոք, որքան էլ գաղափարախոսությունը լավ լինի, այն պետք է պարտադրվի ժողովրդին, ինչպես, ի դեպ, դա արվում էր խորհրդային տարիներին: Կյանքն ամեն քայլափոխի վկայում է, որ հասարակության գերակշռող մասն ունի բավականին ցածր գիտակցական մակարդակ, ուստի եւ առանց պարտադրանքի եւ հարկադրանքի պարզապես անհնարին է մարդկանց օրինապաշտ եւ բարոյական դարձնել: Նույնիսկ Ավետարանը, որի հիմնական սկզբունքներից են հումանիզմն ու հանդուրժողականությունը, միեւնույն է, աստվածային պատիժ է սահմանում անուղղելի մեղսավորների ու ոճրագործների համար: Խնդիրն այն է, որ մարդկանց գերակշռող մասը թե՛ պատմական անցյալում եւ թե՛ արդի ժամանակներում առաջնորդվում է ոչ այնքան բանականության եւ հումանիզմի սկզբունքներով, որքան բնազդներով, որոնք շատ հաճախ նման

են կենդանական բնազդներին: Եվ, իրոք, եթե մարդը բնության մի մասնիկ է, հետեւաբար նաեւ կենդանական աշխարհի մի մասնիկ, ապա բնական է, որ նա պետք է առաջնորդվի ֆիզիոլոգիական օրենքներով: Սակայն եթե մարդիկ ուղղորդվեն բացառապես բնազդներով, ապա այս դեպքում հարց է առաջանում. իսկ ո՞րն է մարդկանց եւ կենդանական աշխարհի այլ ներկայացուցիչների տարբերությունը: Այդ տարբերությունը հենց բանականությունն ասվածն է, ինչպես նաեւ՝ բարոյական արժեքները, որոնք ցավալիորեն մերօրյա իրականության մեջ երկրորդ, իսկ գուցե երրորդ պլան են մղվել: Այս խիստ մտահոգիչ իրողության պատճառների մասին արդեն փոքր-ինչ խոսվել է: Հավելենք, որ բարոյական արժեքները եւ օրենքի գերակայությունը, որպես կանոն, առկա են լինում զարգացած պետություններում եւ առաջադեմ հասարակությունների մեջ, իսկ աշխարհի պետությունների մեծ մասը դժվար է առաջադեմ համարել: Սրա ապացույցն այն է, որ դրանցում հասարակական հարաբերություններն ավելի հաճախ կարգավորվում են կենսաբանության օրենքներով եւ ոչ թե պետականորեն ամրագրված օրենքներով ու կանոններով, իսկ նման պետություններն ու հասարակությունները չունեն զարգացման հեռանկար եւ մեծ հաշվով չունեն ապագա: Որքան էլ ցավալի լինի, բայց մենք ստիպված ենք արձանագրել, որ մեր պետությունն այդ անհեռանկար պետություններից է: Եվ քանի դեռ մեր պետական վերնախավը եւ հասարակությունը չեն վերանայել իրենց սխալ տեսակետերն ու մոտեցումները պետականության եւ առհասարակ կյանքի հանդեպ, Հայաստանը կշարունակի մնալ դատապարտված պետությունների շարքում:

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ԱՆՈԹԷ

Սկիզբը՝ էջ 5

Տերունական աղոթքը, ըստ հայրերի մեկնության, յոթ խնդրանք է պարունակում. երեքը՝ հոգեւոր, չորսը՝ մարմնավոր: Չորս խնդրանքներն այստեղ եւ այժմ են կատարվում, իսկ երեքը հանդերձալ կյանքում պիտի կատարվեն: Եվ որովհետեւ հոգին ավելի պատվական է, քան մարմինը, ապա նախ հոգեւորն ենք խնդրում. «Սուրբ անունը, արքայությունը եւ Աստծու կամքի կատարումը», իսկ հետո խնդրում ենք մարմնավորը. «հանպազօրյա հացը, թողությունը եւ մեղքերի փորձություններից ու չար պատուհասներից ազատելը»: Եվ այս յոթ կարգի խնդրանքներից ավելին պետք չէ խնդրել, որովհետեւ բովանդակվում են բոլոր խնդրանքները, որ օգուտ են հոգուն եւ մարմնին:

Աղոթքը հավատացյալների՝ Աստծուն ուղղած խոսքերն են: Եկեղեցու սուրբ հայրերն առանձնացրել են աղոթքի հայտնի կամ ծածուկ տեսակները, այսինքն՝ հավատացյալներն աղոթում են իրապարակավ կամ առանձին:

Աղոթքը հրապարակային է, երբ հավատացյալները հավաքվում են եկեղեցում կամ որեւէ տեղ եւ աղոթում միասին: Աղոթքը ծածուկ է, երբ հավատացյալներն աղոթում են առանձին՝ տանը, դաշտում, լեռան վրա, աշխատանքի վայրում, ծովում եւ այլուր (խոսքը հրատապ աղոթքի մասին է):

Հաճախ մտածում ենք, թե ինչպիսին պետք է լինի աղոթքի բովանդակությունը: Այս հարցի պատասխանը Հիսուս Զրիստոսը «Հայր մեր»-ով սովորեցրեց ամենաբնի: Զրիստոսյաները պետք է հավատան եւ գիտենան, որ Աստված իրենց երկնավոր Հայրն է, Ում անունը սուրբ է, Ում թագավորությունը պետք է տիրի մարդկանց մեջ, Ում կամքը պետք է գործադրվի ամեն տեղ: Մեր ամենօրյա հացը կամ սնունդը Նա է տալիս մեզ: Նա է ներում մեզ մեր հանցանքները եւ մենք էլ իրար պիտի ներենք եւ պիտի խնդրենք Նրան՝ հեռու պահել մեզ փորձություններից եւ փրկել չարից, որովհետեւ Նրանն են իշխանությունը, կարողությունը եւ հավիտենական փառքը: Ամեն:

Արաքսի ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԵՐԱՆԵՆԻ ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՆԻ՝ ԿԱՊԱՂՈՎԱԿԻՈՅ ԿԵՍԱՐԻՎՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ [ԽՕՍՔԸ] ՊԱՇԹԻ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ էջ 9

«Ժողովուրդը նստեց, որ կերուխում անի, ապա վեր կացաւ, որ պարի» (Ելք ԼԲ 6): Եւ Աստծուն աղօթարար-մաղթողի ու [Տիրոջ] ծառայի քառասորեայ պահեցողութիւնը մէկ արբեցութեան առ ոչինչ դարձան, քանի որ Աստծու մատով գրուած [տախտակը], որ շնորհուել էր պահքի միջոցով, արբեցութիւնը խորտակեց, որովհետեւ մարգարէի կարծիքով՝ արբեալ ժողովուրդն արժանի չէր Աստծու օրինադրութեանը: Եւ ժողովուրդը, որ մեծամեծ նշաններով [եւ իրաշքներով] ճանաչել էր Աստծուն, որովայնամոլութեամբ վայրկենապես եգիպտական կռամովութեան գիրկն ընկաւ: [Յետեւաբար] զուգադրելով համեմատի՛ր երկուսն իրար հետ. ի՛նչպէս է պահքը [մարդուն] մօտեցնում Տիրոջը, եւ ի՛նչպէս է

վայելքը [կորստեան] մատնում փրկութիւնը:

Շարունակենք ընթացքը՝ հասնելով հետագային:

2. Ի՛նչը նսեմացրեց Եսաւին եւ դարձրեց եղբօր ծառան, արդեօ՞ք կերակուրը չէր, յանուն որի տուեց անդրանկութիւնը (հմմտ. Ծննդ. ԻԵ 30-34): Եւ արդեօ՞ք պահքի [շնորհիւ] չէր, որ Սամուէլն ընծալուեց մօրը՝ [Աննային] (հմմտ. Ա. Թագ. Ա 13-16): Ի՛նչը մեծագօր Սամփոսնին անյաղթ դարձրեց, մի՞թէ պահեցողութիւնը չէր, որի ժամանակ ինքը ձեւաւորուեց մօր որովայնում (հմմտ. Դատ. ԺԳ 4): Պահքը ձեւաւորեց նրան, պահքը սնեց նրան. այն պահքը, որ իրեշտակը սահմանեց նրա մօր համար. «Թո՛ղ նա զգուշանայ այն ամենից, որ ասացի այդ կնոջը. որթատունկից ելած ոչ մի բան թող չուտի, զինի եւ օղի չխմի»

(Դատ. ԺԳ 14): Պահքն է ծնում մարգարէներին, զօրացնում ուժեղներին, իմաստնացնում օրինադիրներին: Պահքը հոգու բարի պահպանն է, տնակից մարմնի, զենք քաջարիներին համար եւ կրթարան՝ մարտիկների: Պահքը վանում է փորձութիւնները, ուղղորդում դէպի բարեպաշտութիւն: Նա ընկերակիցն է զգաստութեան եւ գործակիցը ողջախոհութեան: Պատերազմներում քաջութիւն է գործում, իսկ խաղաղ ժամանակ՝ հանդարտութիւն ուսուցանում: Մաքրագործում է նազարացուն (*Նազարացի - առանձնացեալ կամ նուիրեալ անձ (թէ՛ կին, թէ՛ տղամարդ), որ Աստծուն խոստացել է թունդ խմիչքներ չօգտագործել, չճաշակել խաղողի բերքը եւ իր ուխտը պահելու ընթացքում մազերը չկտրել*) եւ ուխտեալին, կատա-

րեալ դարձնում քահանային, որովհետեւ, ըստ օրենքի, ոչ միայն չի կարելի համարձակուել առանց պահքի ընթանալ ի քահանայագործութիւն, այլեւ հաղորդուել աստուածային ներկայութեանը: Պահքի շնորհիւ մեծ տեսիլք եղաւ Եղիային, որովհետեւ քառասորեայ պահեցողութեամբ մաքրելով հոգին՝ Զորեք լեռան քարայրում արժանացաւ տեսնելու Տիրոջը՝ այնպէս, ինչպէս մարդը կարող է տեսնել Նրան (հմմտ. Գ. Թագ. ԺԺ 8-13): Պահեցողութեամբ մահուանից աւելի զօրեղ դառնալով՝ Եղիա մարգարէն պահքի շնորհիւ այրի կնոջը վերադարձրեց նրա զաւակին (հմմտ. Գ. Թագ. ԺԺ 19-23): Եւ պահեցողի բերանից ձայն հնչեց, եւ երեք տարի ու վեց ամսով երկինքը փակուեց (*իմա՛ ցօղ եւ անձրեւ չեղաւ*) անօրէն ժողովու-

րի համար (հմմտ. Գ. Թագ. ԺԵ 1 եւ Դուկ. Դ 25): Եւ խստապարանոցների (*իմա՛ անաստ*) սրտերի կոպտութիւնը մեղմելու համար Եղիան իրեն եւս դատապարտեց չարչարանքի: Եւ դրա համար ասաց. «Կենդանի է Աստուած... եթէ ջուր լինի երկրի վրայ, ապա դա կլինի միայն իմ խօսքով» (հմմտ. Գ. Թագ. ԺԵ 1): Եւ [երաշտից] սկսուած սովով նա պահքի մէջ պահեց ողջ ժողովրդին, որպէսզի վերացնի նրանց փափուկ եւ բարձիթողի կենաց ցարկութիւնը:

Իսկ ի՛նչ կէտեք ապրեց Եղիսէն: Ի՛նչպէս ընդունեց տոմացիների հիւրընկալութիւնը եւ ինքն ի՛նչպէս էր հիւրասիրում մարգարէի [ց որդիներին] ւ: Արդեօ՞ք հիւրասիրութիւնը չսահմանափակուեց վայրի բանջարով եւ ալիւրով (հմմտ. Դ. Թագ. Դ 39-41): Իսկ երբ ուտեստին յաւելուած թունաւոր դղումն սպառնում էր մօտեցողների կեանքին, արդեօ՞ք պահեցողի աղօթքով չթուլացաւ մահաթոյնը:

**Շարունակելի
Գրաբարից փոխադրութիւնը՝
Գեորգ ՄԱՂՈՅԵԱՆԻ**

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայերը հոծ սփյուռք ունեցող այն ժողովուրդներից են, որոնց պատմության եւ մշակույթի մի զգալի հատվածը կերտվել է հայրենի հողից ու երկրից դուրս՝ օտար աշխարհներում։ Եվրոպայի եւ աշխարհի բազմաթիվ երկրներում տարբեր դարաշրջաններում, բազմազան հանգամանքների ու գործոնների թելադրանքով առաջացել են հայկական գաղթաշխարհներ։ Սակայն դրա գլխավոր պատճառը հայ ժողովրդի պատմական անագորույն ճակատագիրն է։ Հայրենիքում ստեղծված անբարենպաստ, տնտեսական, քաղաքական ու անմարդկային պայմանները հայության ստիպել են զանգվածաբար արտագաղթել եւ բախտ որոնել այլ երկրներում։ Դարեր ի վեր հայ ժողովրդի հարյուր հազարավոր զավակներ հեռացել են հայրենիքից եւ ապաստան գտել Ռուսաստանում, որը մոտ էր Հայաստանին, իսկ մշակութային ու հոգեւոր կողմնորոշման առումով՝ բավական հոգեհարազատ։

Ռուսաստանի տարածքում եղած հայկական գաղթաշխարհների վերաբերյալ (ծեւավորումից մինչեւ մեր օրերը) հիմնարար մի աշխատություն է գրվել Զ. ԳԱՄ պատմության ինստիտուտում։ Այս աշխատության հեղինակներն են անվանի պատմաբան, Զ. ԳԱՄ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը եւ պատմագիտության թեկնածու, Զ. ԳԱՄ պատմության ինստիտուտի հայ գաղթաշխարհների եւ սփյուռքի պատմության բաժնի երիտասարդ գիտաշխատող Զովիկ Ալեքսանյանը։

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երկու ծավալուն բաժնից, վերջաբանից, օգտագործված աղբյուրների եւ գրականության ցանկից, անվանացանկից։ Առաջին բաժնում («Ռուսաստանի հայկական գաղթաշխարհները սկզբնավորումից մինչեւ 1917 թ.։ Գաղթաշխարհների տնտեսական, հասարակական, հոգեւոր-մշակութային կյանքը») նախ տեսականորեն հիմնավորվում է այն հայեցակետը, որ Ռուսաստանի տարածքում հայկական գաղթաշխարհների առաջացումը կապված է

հայ-ռուսական հարաբերությունների սերտացման հետ։ Ուշ միջնադարի դժոխակ ժամանակաշրջանում հայ քաղաքական միտքը տենդագին ելք էր որոնում Հայաստանը թուրքական եւ պարսկական տիրապետություններից ազատագրելու՝ հանգեցնում էր եզրակացության, որ դա հնարավոր է իրագործել միայն Ռուսաստանի օգնությամբ։ Միաժամանակ Ռուսական հզորագույն կայսրությունն իր հերթին ձգտում էր ընդարձակել հարավային սահմանները եւ այդ նպատակով փորձում էր բարոյաքաղաքական կամուրջներ ձեւավորել՝ հենվելով հարավում ապրող դավանակից ժողովուրդների՝ հայերի եւ վրացիների վրա։ Հստակ մատնանշվում է, որ Ռուսական կայսրության այդ քաղաքականությունը համընկնում էր Այսրկովկասի ժողովուրդների եւ հատկապես հայության ազատագրական ակնկալիքների ու հույսերի հետ։

Ահա այսպիսի նպատակով բարոյաքաղաքական իրավիճակում Ռուսաստանի մի շարք վայրերում՝ Աստրախանում, Զյուսիսային Կովկասում, Մոսկվայում, Պետերբուրգում, Նոր Նախիջևանում հիմնադրվեցին եւ հետզհետե ստվարացան հայկական գաղթաշխարհները։ Թերեւս միայն բացառություն էին կազմում Դրիմի հայ համայնքները, որտեղ հայերը հաստատվել էին ավելի վաղ՝ սկսած XI դ. վերջերից։ Նշվում է, որ Դրիմում հայ բնակչությունը հաստատվել էր թաթարների գալուց առնվազն մեկուկես դար առաջ։ Հետաքրքրական է, որ հայ գաղթաշխարհները տեղաբաշխված էին միջնադարյան Դրիմի նշանավոր գրեթե բոլոր կենտրոններում։ Դրիմի հայկական գաղթաշխարհների ոչ պաշտոնական կենտրոնը մեծահռչակ Կաֆան էր, որը XIV-XX դդ. ուներ 70 հազար բնակիչ, որի 2/3-ը կազմում էին հայերը։ Փաստառատ տվյալներով ներկայացված են դրիմահայության հարյուրամյակների պատմությունը՝ կենցաղը, զբաղմունքները, վարչական եւ իրավական կացությունը, եկեղեցական, ազգային եւ մշակութային կյանքը։

Այնուհետեւ աշխատության էջերում հաջորդաբար տրված են Աստրախանի, Զյուսիսային Կովկասի, Նոր Նախիջևանի, Մոսկվայի եւ Պետերբուրգի հայկական գաղթաշխարհների ստեղծման ու զարգացման գործընթացները՝ փուլ առ փուլ, դրվագ առ դրվագ՝ մեծ հիմնախնդիրներից մինչեւ մանրուքները։ Հնարավորինս գիտական փաստառատությամբ ներկայացված են վերոնշյալ գաղութների հայության ժողովրդագրական տեղաշարժերն ու ուղիները, դարերի ընթացքում ստեղծված նյութական ու հոգեւոր արժեքները, կրթական համակարգը, մշակութային օջախները, պարբերական մամուլն ու գրական կյանքը, բնակչության առօրյա զբաղմունքների եկամտաբերությունն ու առանձնահատկությունները։

Կարելի էր ու հետաքրքիր տեղեկություններ են հաղորդվում Մոսկվայի եւ Պետերբուրգի հայկական գաղութների ձեւավորման ու հետագա բարգավաճման մասին։ Նշվում է, որ Մոսկվայում հայերի գտնվելու վերաբերյալ առաջին հիշատակումները վերաբերում են XIV դ. երկրորդ կեսին (էջ 150)։ Մոնղոլ-թաթարական լծի թոթափումից հետո հայերի հոսքը դեպի Մոսկվա ավելի աշխույժ է դառնում։ Այն առավել ուժեղանում է XVII դ. առաջին կեսից, երբ Ռուսական կայսրության մայրաքաղաք էին գալիս ոչ միայն Հայաստանից, այլեւ Անդրկովկասի հայաբնակ բազմաթիվ վայրերից՝ Դրիմից, Աստրախանից եւ այլ տեղերից։

Հատկանշական է այն դիտարկումը, որ, ի տարբերություն Ռուսաստանի տարածքում ձեւավորված մյուս հայկական գաղութների, որոնց ինքնավարությունը մարմնավորում էին ռաթիաուզները կամ մագիստրատները, Մոսկվայի եւ Պետերբուրգի պարագայում այդ դերը կատարում էր հայերին միավորող միակ ազգային ու համագաղթյալ կազմակերպությունը՝ Հայ Առաքելական Եկեղեցին։

Աշխատության երկրորդ բաժնում («Ռուսաստանի հայկական համայնքները խոր-



հրդային տարիներին։ ՌԴ համայնքն արդի փուլում») ներկայացված է իրավիճակը հայկական գաղթաշխարհներում ցարական իշխանության տապալումից հետո՝ խորհրդային վարչակարգի ավելի քան 70 տարվա ընթացքում, ինչպես նաեւ՝ արդի շրջանում։


Ճշմարտացի մոտեցում է ցուցաբերված պատմական իրադարձությունների նկատմամբ, դրանց ազդեցությունը հայկական գաղթաշխարհների վրա՝ առանց դուրս-ինչ չափազանցելու կամ նվազեցնելու։ Այդ, Առաջին համաշխարհային պատերազմի հետեւանքով Ռուսաստանի հայ համայնքների հայության թվաքանակը շեշտակի աճեց, իսկ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունն այդ երկրի հայաբնակ շրջաններում ազգային կյանքի զարգացման հզոր խթան դարձավ։ Սակայն դա երկար չտեւեց։ Իշխանության գլուխ անցած բոլշևիկներն ազգային հարցի հանդեպ շուտով որդեգրեցին բոլորովին նոր մոտեցում։ Արդեն 1918 թ. հունիսի 12-ին ՌԽՖՍՀ ժողովրդական ղեկը եւ ընդունում «Հայկական ազգային խորհուրդները, պաշտպանության խորհուրդները, ռազմահեղափոխական կոմիտեները եւ մյուս բուրժուական կազակերպությունները լուծարելու մասին»։ Վերոնշյալ կառույցների լուծարումից հետո նրանց գույքն ու կապիտալը, զբաղեցրած շինությունները դրվում էին Հայկական գործերի կոմիսարիատի ենթակայության ներքո։

Շարունակությունը՝ էջ 12

5-րդ դարի հայ լուսավարական հիմնահարցերից

5-րդ դարում բուռն զարգացում է ապրում հայ պատմագրությունը, ինչն ամենից առաջ պայմանավորված էր ազգային ինքնագիտակցության զարթոնքով, ինչպես նաեւ՝ ազգային ինքնության եւ դիմագծի պահպանման անհրաժեշտության գիտակցմամբ, քանզի ազգային կյանքի պատմական ընթացքն ու տրամաբանությունը ենթադրում էին պատմափաստասիրական վերլուծություն եւ մեկնաբանություն՝ սխալների ճանաչման, սեփական հնարավորությունների իրատեսական գնահատման եւ զարգացման հետագա ուղղություններն ուրվագծելու համար։ Մի շարք հայ մտածողներ ու պատմիչներ (Ագաթանգեղոս, Եղիշե, Փավստոս Բուզանդ, Դազար Փարփեցի, Մովսես Խորենացի) իրենց ստեղծագործական ժառանգության մեջ քննարկում էին հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության, քաղաքական առաջնությունների, կառավարման, պետության դերի եւ նշանակության հետ կապված տարաբնույթ հիմնահարցեր։

Պատմափիլիսոփայական ուղղության նշանավոր ներկայացուցիչն էր 5-րդ դարի մտածող Մովսես Խորենացին՝ Պատմահայրը կամ Բերթողահայրը։ Խորենացին երբեմն ազգային կյանքի կազմակերպման, պետության հզորաց-



ման եւ պահպանման գործում առավել մեծ կարեւորություն է տալիս հայոց պատմության հեթանոսական շրջանի ռազմաքաղաքական գործիչներին, ինչպես նաեւ՝ մշակութային արժեքներին։ Զերթողահայրն իր աշխատության կյանքի կոչումը կապում էր Հայաստանի պատմաքաղաքական իրականության հրամայականների հետ։ Նա տեսել էր հայկական պետության անկախության անկումը, Արեւելքից եւ Արեւմուտքից ներխուժած զավթիչների տիրապետությունն ու դրա բացասական հետեւանքները։

Մովսես Խորենացին խնդիր ուներ իրականացնելու հայ ժողովրդի պատմության համակարգված շարադրանքը։ Այս առումով նա չի խորշում քննադատական հայացք ուղղելուց մեր

նախնիներին։ Վերջիններս իրենց ծուկության, «անիմաստաբեր բարքերի» եւ այլ գործոնների պատճառով չեն կարելիք իրենց ապրած ժամանակաշրջանի առաջնակարգ իրադարձությունները, գրի չեն առել պատմական անցքերը՝ չգիտակցելով, որ առանց պատմության՝ ազգը չի կարող ազգ լինել։ Խորենացին, խնդիր ունենալով հայոց պատմության վերակազմության ու «վերաստեղծման» հարցը, այնուամենայնիվ, նպատակ չի հետապնդել հայոց պատմությունն ամբողջությամբ գրի առնելը։ Նա իր խնդիրն է համարել մեր առաջին եւ բուն նախնիներին ըստ էության ներկայացնելը։ Խորենացու անվան հետ է կապվում հայ իրականության մեջ գիտական պատմագրության հիմքերի

ամրագրումը։ Իր «Հայոց պատմության» մեջ նա օգտագործում է տարբեր թագավորների ու կառավարողների հրովարտականքները, տարբեր լեզուներով պահպանված զանազան տվյալները, ժողովրդական ավանդազրույցները, առասպելներն ու գրական նյութերը։ Նրա համոզմամբ՝ առանց ժամանակագրության չկա հավաստի կամ ճշմարտացի պատմություն։ Նա պատմության օբյեկտիվ շարադրման սկզբունքի կողմնակից է։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սուրբ Գրքի շրջանակներում հայ ժողովրդի ծագման վերաբերյալ տեղեկություններ չկան՝ Խորենացին ներկայացնում է մի տեսություն, որում հայոց պատմությունը դիտարկվում է որպես մարդկային պատմության բաղկացուցիչ մաս։ Հայերը, ինչպես եւ մյուս ժողովուրդները, ծագում են աստվածաշնչյան նահապետներից, ունեցել են նշանավոր թագավորներ, քաղաքական գործիչներ, ավանդ են ունեցել մարդկության մշակութային ժառանգության հարստացման գործում եւ այլն։ Իր «Հայոց պատմության» մեջ Խորենացին հատուկ ուշադրություն է դարձնում այն առաջնությունների, թագավորների կենսագործություններին, որոնք իրենց ռազմական տաղանդով, դիվանագիտական որակներով ու

բարեկիրթ վարքագծով ոչ միայն կարողացել են թոթափել օտար նվաճողների լուծը, այլեւ շենացնել ու հզորացնել իրենց երկիրը։ Այս առումով պատահական չէ Տիգրան Մեծի՝ «մեր թագավորներից ամենահզորի ու ամենախոհեմի, նրանցից բոլորից քաջի» օրինակի վկայակոչումը, որն իր առաջնորդական որակները զուգակցելով իմաստությամբ, դիվանագիտական ճկունությամբ՝ ընդարձակեց Հայոց երկրի սահմանները, ազատագրեց իր ժողովրդին օտարների լծից, իսկ շատերին դարձրեց լուծ դնողներ եւ հարկապահանջներ։

Ինչպես արդեն ակնարկվեց, հայ պատմիչները պետության զարգացման եւ հզորացման գործում կարեւորում էին սոցիալական դերերի եւ պարտականությունների հստակ իրականացումը։ Հարկ է նշել, որ այս գաղափարը խիստ համահունչ էր ինչ չինական փիլիսոփայության ականավոր ներկայացուցիչ Կոնֆուցիոսի «Անունների ուղղում» տեսության դրույթներին, քանզի մ. թ. ա. 6-րդ դարի չինացի մտածողը երկնքի կողմից նախասահմանված դիրքի եւ պաշտոնի խախտումը դիտում է պետության մեջ անկարգության, անիշխանության, բարոյազրկման պատճառ։

Արման սրկ. ԱՐԲՈՒՍՅԱՆ

Տրասարակվել է

Մայր Աթոռ
Սբ Էջմիածնում (2016 թ.)



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, լույս է ընծայել «Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստն ու փրկությունները» աշխատությունը՝ աշխատասիրությամբ Գեորգ Տեր-Վարդանյանի:

Գրքում գետեղված առաջին աշխատության մեջ («Ս. Գալսեմեան, Հայկական կոտորածները եւ մեր ձեռագրական կորուստները») ներկայացված է 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի առաջին երկու տասնամյակի ընթացքում թուրքական բարբարոսությունների հետեւանքով հայ ձեռագիր-գրքային մշակույթի կորուստների ընդհանուր պատկերը, ապա Հոփ-հանես վրդ. Զյուլայանի «Համառոտ նկարագրություն Վասպուրականի մեջ եղած մի քանի նշանավոր վանքերում» շարադրանքում պատկերված է

Վասպուրականի նահանգի վանքերի ավերմունքը:

Երրորդ գործը պարունակում է Բաբգեն աթոռակից Կաթողիկոս Կյուլեսերյանի ժողոված հիշատակարանները եւ ձեռագրի նկարագրությունները:

Հաջորդ երկուսը Գ. Տեր-Վարդանյանի՝ եղեռնից փրկված մի ձեռագրի եւ մի պատահիկի նվիրված հետազոտություններն են, որոնք 1919 թ. առաջ պահպանվելիս են եղել Ազուլիսի Ս. Թովմաս առաքյալ վանքում:

Արժեքավոր այս հատորը տպագրվել է մեկենասությամբ տիկին Վեհանուշ Վարդանի՝ ի հիշատակ ամուսնու՝ պատմաբան Լեւոն Վարդանի:

Կարգալույծ է հռչակվել

Տ. Կարապետ քահանա հաջիբաբյանը

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Կարապետ քհն. Խաչիբաբյանը (Ուկրաինայի հայոց թեմ): Տնօրինության համար հիմք է ծառայել Կարապետ քահանայի կողմից ներկայացված դիմումը:

Կարգալույծ եկեղեցական այսուհետ դասվում է աշխարհականների շարքը եւ կկոչվի իր ավագանի անունով՝ Կարապետ Խաչիբաբյան:

«Ավանդական արժեքներ. Ժամանակակից հասարակության զարգացման հոգեւոր-բարոյական ուղենիշները» խորագրով միջազգային գիտաժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Մարտի 31-ին, օրհնությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, աշակցությամբ ԱՖՈՆ սուրբ Լեւոն ռուսական սրբավայրերի աշակցման բարեգործական հիմնադրամի, Ռուս Ուղղափառ եւ Հայ Առաքելական Ս. Եկեղեցիների, տեղի ունեցավ «Ավանդական արժեքներ. Ժամանակակից հասարակության զարգացման հոգեւոր-բարոյական ուղենիշները» խորագրով միջազգային գիտաժողովը:

Սույն գիտաժողովի առանցքային թեմաներն էին ընտանիքի ինստիտուտի աշակցությունը, նրա ճակատագրական դերն առողջ հասարակության զարգացման մեջ, ինչպես նաեւ՝ բարոյականության ու ավանդական կենսակերպի հիմքերը:

ՌԴ եւ ՀՀ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, հոգեւոր եւ գիտական շրջանակների, ՀԼՄ-ների 150 փորձագետի քննարկման կենտրոնում հոգեւոր արժեքների դեմ ուղղված

քարոզչական գործողությունների հակազդեցության խնդիրներն էին, երիտասարդության բարոյական դաստիարակության հարցերը, ընտանեկան բռնության դեմ պայքարը եւ հայրենասեր ու մշակութային-պատմական ավանդույթների զարգացումը:

Հյուրերը մասնակցեցին նաեւ ցուցահանդեսին, ուր ներկայացված էին եկեղեցական օգտագործման իրեր, Հայաստանի եւ Ռուսաստանի եկեղեցիների շինարարության պատմությունը նկարագրող փաստաթղթերի պատճեններն ու բնօրինակները:

Ցուցահանդեսը կազմակերպվել էր Հայաստանի ազգային արխիվի, Երեւանում ռուսական մշակութային կենտրոնի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի աշակցությամբ:

Լրատվական կյուրերը՝
ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՓԱՂԹՕԾԱՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ էջ 11

Իսկ այն վայրերում, որտեղ Հայկական գործերի կոմիսարիատը բաժանմունքներ չունեւ, գույքը հանձնվում էր տեղական խորհուրդներին: Չնայած ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրավիճակին (նախագահ՝ Վ. Ավանեսով, տեղակալ՝ Վ. Տերյան)՝ կոմիսարիատը Ռուսաստանի հայերի ազգային կյանքի ղեկավարությունը վերցրեց իր ձեռքը եւ կարողացավ քարոզչական ու լուսավորական զգալի աշխատանք կատարել մշակութային եւ կրթական ոլորտներում, ինչպես նաեւ օգնել մեծաթիվ հայ գաղթականներին ու կարիքավորներին:

Աշխատության էջերում առաջին անգամ ներկայացվում են 1920-1930-ական թթ. Խորհրդային Ռուսաստանում ձեւավորված հայկական ազգային գյուղխորհուրդներն ու շրջանները, այնտեղ առկա կրթամշակութային կյանքը, դպրոցը, գրական անցուղարձը: Զեյրին է հայտնի, որ 1925 թ. մարտի 10-ին Հյուսիս-կովկասյան երկրամասի Մայկոպի օկրուգի զբաղմունքում հիմնվել է Հայկական ազգային շրջանը, որը կազմավորվել է գլխավորապես հայերով բնակեցված գյուղական խորհուրդներից, իսկ շրջկենտրոնը Ելիսավետպոլսկոյե (Շահումյան) գյուղն էր: Հայկա-

կան ազգային շրջանը, փաստորեն, զբաղեցնում էր Մայկոպի օկրուգի հարավարեւմտյան մասը, սահմանակից էր Կուբանի եւ Չերնոմորիեի օկրուգներին՝ կազմելով 1,286 քռ. կմ տարածք (էջ 225):

1927-1928 թթ. այնտեղ բացված հայկական 23 դպրոցներում սովորում էր 1120 աշակերտ: Հաջողությամբ գործում էր հայկական թատրոնը, հրատարակվում էր «Սուրբ-մանգաղ» պարբերականը, տպագրվում էր հայ գրականություն:

Հետաքրքիր է նշել, որ 1931 թվականից սկսվել են շրջանային աշխատակազմի եւ գյուղական կազմակերպությունների հայացումը եւ անցումը հայերեն գործավարությանը, սակայն, այնուամենայնիվ, դրանք արմատավորել չի հաջողվում: Այս առումով մեջբերված են բազմաթիվ փաստեր ու թվեր՝ տարբեր աղբյուրներում ընդունված որոշումներից ու արձանագրություններից:

ՌԽՖՍՐ-ում երկրորդ հայկական ազգային շրջանը կազմավորվել է Դոնում՝ 1926 թ. (Մյասնիկյանի ազգային շրջան), որի կենսագործունեությունը նույնպես բավարար չափով լուսաբանվել է աշխատության մեջ:

Ուշագրավ փաստեր է պարունակում «Հայության թվաքա-

նակն ու տեղաբաշխումը ՌԽՖՍՐ-ում 1920-1989 թթ.» գլուխը, որտեղ գետեղված բազմաթիվ աղբյուրները տվյալներ են տալիս Ռուսաստանի տարածքում ըստ շրջանների հայության թվաքանակի, տեղաբաշխվածության, սեռի, սոցիալական վիճակի, զբաղմունքների, գրագիտության աստիճանի վերաբերյալ: Հետաքրքիր նյութեր է պարունակում «Հայության հոգեւոր-եկեղեցական կյանքը ՌԽՖՍՐ-ում» գլուխը: Դրանք իրական պատկերացում են տալիս խորհրդային իշխանության հաստատումից հետո Ռուսաստանի հայկական թեմերում ստեղծված անմխիթար ու ծանր իրավիճակի մասին. «1930-ական թթ. հայ հոգեւորականությունը բռնաճնշվեց, որի արդյունքում, փաստացիորեն, Հայ Առաքելական Եկեղեցու կառույցը ՌԽՖՍՐ տարածքում, մասնավորապես Հյուսիսային Կովկասում վերացվեց: Փակվեցին, ապա տարբեր տարիների վերացվեցին Արմավիրի, Աստրախանի, Նոր Նախիջեւանի, Կրասնոդարի, Ստավրոպոլի, Սուրբ Խաչի (Բուլդոնովսկի), Պատիգորսկի, Գրոգու, Ղալարի, Մոզդուկի եւ այլ բնակավայրերի հայկական եկեղեցիները» (էջ 330):

Բազմաթիվ փաստեր վկայում են, որ 1930-ական թթ. իսկա-

կան արշավ է սկսվել Ռուսաստանի տարածքում գտնվող հայկական եկեղեցիների ու պաշտամունքային այլ օջախների դեմ. նրանց ունեցվածքը բռնագրավել են, հոգեւորական դասը ենթարկվել է հալածանքների:

Աշխատության վերջին գլուխը («ՌԴ համայնքն արդի փուլում: Թվաքանակի ու տեղաբաշխման ընդլայնում, ինքնակազմակերպական խնդիրներ») ներկայացնում է վերջին շրջանում Ռուսաստանի հայ (եւ ոչ միայն հայ) համայնքներում ընթացող ժողովրդագրական գործընթացների թարմ պատկերը, ռուսաստանաբնակ հայության քաղաքական, սոցիալական, մշակութային հիմնախնդիրները: Աշխատության հեղինակները փաստարկում են, որ հետխորհրդային տարիներին ՌԴ հայության թվաքանակի շարունակական աճն այդ երկրի հայկական համայնքը դարձրել է խոշորագույն աշխարհում, որի սոցիալ-տնտեսական, քաղաքական եւ մշակութային ներուժը լիովին բացահայտված չէ:

Ամփոփելով նշենք, որ Վ. Բարխուդարյանի եւ Հ. Ալեքսանյանի հեղինակած սույն աշխատությունը հայ պատմագիտության մեջ առաջին ամբողջական երկն է, որը տալիս է Ռուսաստանի

հայ գաղթօջախների պատմության հնարավորինս սպառիչ պատկերը՝ կազմավորման ժամանակներից մինչեւ մեր օրերը: Գիրքը շարադրված է գիտական բարեխղճությամբ, բարձր պատասխանատվությամբ, անկողմնակալությամբ: Օգտագործված են բազմաթիվ սկզբնաղբյուրներ, վավերագրեր, մենագրություններ, հոդվածներ, պարբերականներ, կայքէջեր (հայերեն եւ օտար լեզուներով), որոնք առավել եւս բարձրացնում են շահեկան եւ դարձնում գրախոսվող աշխատության գիտական վարկանիշը:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաքաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Երիտոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստուրիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 4.4.2016 թ.

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ